ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

27 հունիսի 2021թ. **N 183-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 20-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվել են 2021 թվականի հունիսի 20-ին՝ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք) 104-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ժամկետում:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին և 104-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2008 ընտրական տեղամաս, որից 12-ը՝ քրեակատարողական հիմնարկներում (հիմք՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 5-րդ մաս, 17-րդ հոդվածի 4-րդ մաս և 18-րդ հոդվածի 1-ին մաս):

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածին և 44-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան գործել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

Հայաստանի Հանրապետությունում գործել է ընդհանուր թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողով՝ 10-ը՝ Երևան քաղաքում և 28-ը՝ հանրապետության մարզերում:

Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2021 թվականի հունիսի 27-ին հիմք ընդունելով ընտրական տեղամասերում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, կազմել է արձանագրություն Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրության քվեարկության արդյունքների վերաբերյալ:

Համաձայն նշված արձանագրության՝

- ընտրողների ընդհանուր թիվը 2.595.512.
- քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը 1.281.997.

- տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված ինքնասոսնձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը 2.690.900.
- տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը 206.400.
- ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների ընդհանուր թիվը 1.278.655.
- ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը 2.742.
- ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը 1.281.397.
- չօգտագործված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը 203.665.
- չօգտագործված ինքնասոսնձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը 1.409.889.
- անվավեր քվեաթերթիկների թիվը 4.593.
- անճշտությունների գումարային չափը 973:

Կուսակցության, կուսակցությունների դաշինքի անվանումը	**Կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը**
1. «Արդար Հայաստան» կուսակցություն	3.914
2. «Հայ ազգային կոնգրես» կուսակցություն	19.691
3. «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն	688.761
4. «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցություն	4.619
5. Ազատություն կուսակցություն	1.844
6. «Պատիվ ունեմ» դաշինք	66.650
7. Միասնական հայրենիք կուսակցություն	964
8. Համահայկական ազգային պետականություն (ՀԱՊ) կուսակցություն	803
9. Լուսավոր Հայաստան կուսակցություն	15.591
10. Մեր տունը Հայաստանն է կուսակցություն	12.149
11. «Հանրապետություն» կուսակցություն	38.758
12. «Հայոց հայրենիք» կուսակցություն	13.130
13. Ազատ հայրենիք դաշինք	4.119
14. «Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	50.444

15. Հայաստանի դեմոկրատական կուսակցություն	5.020
16. «5165 ազգային պահպանողական շարժում» կուսակցու թյուն	15.549
17. «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	3.775
18. «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք»	19.212
19. «Ազգային օրակարգ» կուսակցություն	719
20. Վերելք կուսակցություն	1.233
21. Ազատական կուսակցություն	14.936
22. Հայաստանի եվրոպական կուսակցություն	2.440
24. Հայաստան դաշինք	269.481
25. «Ազգային-ժողովրդավարական բեվեռ» համահայկական կուսակցություն	18.976
26. «Ինքնիշխան հայաստան» կուսակցություն	3.915

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովում վարչական վարույթն իրականացվում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան, սույն օրենսգրքով սահմանված առանձնահատկություններով և ժամկետներում»:

2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը՝ 20.06.2021թ., տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է 1 դիմում՝ նախընտրական քարոզչության կարգի ենթադրյալ խախտման վերաբերյալ, որով պահանջվում էր հեռացնել նախընտրական շտաբի վրա փակցված պաստառը: Դիմումը մերժվել է, քանի որ պաստառը փակցված էր Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան:

Մինչև քվեարկության օրը՝ 20.06.2021թ., Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են թվով 85 դիմումներ (բողոքներ), որոնցից կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացվել է թվով 13 դիմում, պատգամավորի թեկնածուների կողմից ինքնաբացարկի մասին թվով 17 դիմում, «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության կողմից՝ 2 դիմում պարզաբանում տալու վերաբերյալ, Ազգային ժողովի պատգամավորի կողմից՝ թվով 2 դիմում, քաղաքացիների կողմից՝ թվով 48 դիմում, թվով 2 դիմում ներկայացվել է նաև քաղաքացի Տիգրան Արզաքանցյանի կողմից, ում որպես պատգամավորի թեկնածուի գրանցումն անվավեր էր ճանաչվել Կենտրոնական

ընտրական հանձնաժողովի որոշմամբ, 1 դիմում հասարակական կազմակերպության կողմից դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով դիտորդներին հավատարմագրելու վերաբերյալ, որը մերժվել է Ընտրական օրենսգրքի պահանջները չբավարարելու հիմքով:

Պարզաբանում տալու վերաբերյալ 2 դիմումները բավարարվել են:

Քվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է թվով 21 դիմում, որոնցից մեկը ներկայացվել է ընտրողի կողմից, մեկը՝ պատգամավորի թեկնածուի կողմից, թվով 19-ը՝ «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» և Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ հասարակական կազմակերպությունների կողմից:

Քվեարկության օրվանից մինչև արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից 2 օր առաջ՝ ժամը 18.00-ն, Կենտրոնական ընտրական հանձնաժողովներում ստացվել է թվով 18 դիմում:

Ներկայացված բոլոր դիմումները Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ: Դիմումների քննարկման օրվա և ժամի մասին դիմումատուները եղել են պատշաճ ծանուցված, իսկ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները սահմանված կարգով ուղարկվել են դիմումատուներին և հրապարակվել Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում: Բոլոր այն դեպքերում, երբ դիմումատուները ներկայացել են իրենց դիմումների քննարկմանը, ապահովվել է վերջիններիս լսվելու իրավունքը:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ:»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստեղծվել է իրավիճակային վերլուծության կենտրոն, որտեղ գործել է նաև թեժ գիծ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկություններն օպերատիվ կարգով ուսումնասիրվել են իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից, դրանցում ներկայացվող տեղեկությունների իսկությունը և փաստական հանգամանքները պարզվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ: Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու իրավիճակային վերլուծության

կենտրոնն օպերատիվ կարգով արձագանքել են չորս տասնյակից ավելի կայքերում տեղ գտած ավելի քան 400 հաղորդումներին, ստուգվել են հրապարակվող հանգամանքները և տրվել մեկնաբանություններ: Մեկնաբանությունների ու պարզաբանումների վերաբերյալ տեղեկատվությունը հենց քվեարկության օրը զետեղվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021թ. հունիսի 20-ի արտահերթ ընտրությունների քվեարկության օրը թվով 2 տարածքային ընտրական հանձնաժողովի սահմանված կարգով ներկայացված են եղել 2 դիմում՝ ընտրողի և պատգամավորի թեկնածուի կողմից: Ներկայացված դիմումները քննարկվել են սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանել է քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակում՝ բացառությամբ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող ցուցակների: Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն.

«Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Ընտրողների ցուցակները սկանավորվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և չափորոշիչներին համապատասխան այնպես, որ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման վայրի հասցեն, ինչպես նաև ընտրողի ստորագրության, ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար նախատեսված սյունակները լինեն տեսանելի:

Ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում և ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում»:

Ընտրողների ստորագրված ցուցակները սահմանված կարգով և ժամկետներում տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, սահմանված վերջնաժամկետից ավելի քան երկու ժամ առաջ: Նշվածի մասին հրապարակայնորեն իրազեկվել է հանրությունը՝ մամուլի հաղորդագրություններ տարածելու միջոցով:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ օրենսգրքով սահմանված իրավասու անձը կարող է ներկայացնել այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում համապատասխան տարածքային

ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում սահմանված ժամանակահատվածում, անգամ այդ ժամանակահատվածից հետո, տարածքային ընտրական հանձնաժողովներում, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովում չի ստացվել որևէ դիմում այլ անձի փոխարեն քվեարկելու մասին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասով սահմանված է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու ինստիտուտը: Մասնավորապես, ամրագրվել է, որ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Եթե դիմումի քննարկման արդյունքով տարածքային ընտրական հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ քվեարկության ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի պահանջների այնպիսի խախտումներ, որոնք կարող էին էապես ազդել քվեարկության արդյունքների վրա, և եթե հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները, ապա տարածքային ընտրական հանձնաժողովն այդ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր է ճանաչում: Այդ դեպքում նյութերն ուղարկվում են դատախազություն:

Թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողովներից և ոչ մեկում չի ստացվել դիմում տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում:»

Թվով 3 տարածքային ընտրական հանձնաժողովներում (թիվ 2, 3, 9) ներկայացվել է ընդհանուր թվով 4 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ՝ 4 դիմում: Դիմումները ներկայացված են եղել «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության վստահված անձանց կողմից: Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել են նաև դիմումներ «Ինքնիշխան Հայաստան»

կուսակցության լիազոր ներկայացուցչի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից, որոնք վերաբերվել են տարբեր տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ անճշտություններին: Ներկայացված դիմումները վերաբերվել են ընդհանուր թվով 24 տեղամասերի տվյալներին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների հաշվառմամբ տարածքային ընտրական հանձնաժողովները իրականացրել են վերահաշվարկ ինչպես վստահված անձանց ներկայացրած դիմումներով, այլև սեփական նախաձեռնությամբ են իրականացրել վերահաշվարկ՝ հաշվի առնելով նաև «Ինքնիշխան Հայաստան» կուսակցության լիազոր ներկայացուցչի և Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից նշված դիմումատուների մատնանշած ընտրական տեղամասերը: Թիվ 2, 3, 4, 5, 6, 7, 9, 10, 11, 13, 14, 17, 23, 24, 25, 33, 34 և 35 տարածքային ընտրական հանձնաժողովները, սեփական նախաձեռնությամբ իրականացրել են քվերակության արդյունքների վերահաշվարկ: Ընդհանուր առմամբ վերահաշվարկվել են 82 ընտրական տեղամասերի (թիվ 2/1, 2/2, 2/3, 2/6, 2/32, 2/44, 3/20, 3/26, 3/27, 4/3, 4/4, 4/5, 4/6, 4/8, 4/9, 4/10, 4/11, 4/16, 4/40, 4/44, 5/4, 5/14, 6/9, 6/13, 6/18, 6/22, 6/26, 7/7, 9/4, 9/30, 9/32, 9/33, 9/43, 9/44, 9/55, 10/33, 10/43, 11/11, 11/17, 11/22, 13/31, 14/8, 14/40, 17/14, 17/38, 23/38, 23/46, 23/47, 23/50, 24/4, 24/7, 25/12, 25/19, 25/21, 25/25, 25/34, 25/39, 25/43, 33/31, 34/2, 34/3, 34/4, 34/5, 34/6, 34/8, 34/9, 34/10, 34/12, 34/13, 34/19, 34/20, 34/21, 34/22, 34/24, 34/27, 34/29, 34/37, 34/44, 34/60, 34/63, 34/68, 35/30) արդյունքներ: Արդյունքում՝ թվով 16 տեղամասերում նախապես արձանագրված քվեարկության արդյունքները որևէ փոփոխություն չեն կրել, 31 տեղամասերում թեկնածուներին տրված կողմ ձայների որևէ փոփոխություն չի արձանագրվել: Մնացած թվով 51 տեղամասերում արձանագրվել են ոչ էական բնույթի փոփոխություններ՝ պայմանավորված վավեր կամ անվավեր քվեաթերթիկների ճանաչման հետ:

Հարկ է նկատել, որ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ տարածքային ընտրական հանձնաժողովը վերահաշվարկն իրականացնում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփման համար՝ օրենսգրքով սահմանված պահանջներին համապատասխան՝ այսինքն, վերահաշվարկվում են բոլոր արդյունքները: Վերահաշվարկների արդյունքում համապատասխան հաղորդումներ են ներկայացվել իրավապահ մարմիններին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն.

«Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է չորս դիմում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին, որոնցից մեկը ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ: Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետներում ներկայացված դիմումները ներկայացված են եղել «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության, Հայաստան և «Պատիվ ունեմ» դաշինքների կողմից: «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության դիմումով նշվում է.

հիմք ընդունելով ՀՀ ընտրական օրենսգրքի 46-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2021 թ. հունիսի 20-ի ԱԺ ընտրությունների նախընտրական քարոզչության և քվեարկության ժամանակ տեղ են գտել մի շարք խախտումներ, որոնք ազդել են քվեարկության արդյունքների վրա, մասնավորապես՝

- մինչև նախընտրական քարոզչությունը հանրային ծառայողների կարգավիճակ ունեցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցիչները պետական ռեսուրսների հաշվին փաստացի նախընտրական քարոզչություն էին իրականացնում.
- նախընտրական քարոզչության ժամանակ հոգեբանական հարկադրանքի մեթոդներ և բռնության կոչեր, բռնության կիրառման սպառնալիքներ և ատելություն էին տարածում
- քվեարկության օրը ընտրական տեղամասերում կուտակումներ են.
- բազմաթիվ կտրոնների վրա բացակայել են լուսանկարները.
- արձանագրվել են ուղղորդված քվեարկության դեպքեր
- նախընտրական քարոզչության ժամանակ արձանագրվել են ձերբակալությունների և բերման ենթարկելու դեպքեր.
- բազմաթիվ ընտրական տեղամասեր քվեաթերթիկների հաշվելու ժամանակ հոսանքազրկվել են.
- քվեաթերթիկների ծրարները թափանցել են և պարզ է դարձել թե ում օգտին են քվեարկում, ինչպես նաև արձանագրվել են քվեարկության վերահսկման այլ դեպքեր,

Ներկայացնելով վերոգրյալը ներկայացվել է պահանջ 2021թ. հունիսի 20-ի ընտրության արդյունքներն անվավեր ճանաչել:

Հայաստան դաշինքի դիմումով նշվում է.

«Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածը երաշխավորում է ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու գործիքակազմը: Նույն հոդվածի 15-րդ մասը սահմանում է, որ «*Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփոխ ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը*

կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

Գտնում ենք, որ ընտրության արդյունքները ենթակա են անվավեր ճանաչման, հիմք ընդունելով 2021 թվականի մայիսի 10-ից արտահերթ ընտրությունների մեկնարկման պահից (իսկ առանձին դրվագներով՝ նաև մինչ այդ), մինչև հունիսի 20-ը ներառյալ, ընտրական իրավունքի էությունը ու սկզբունքները խաթարող այնպիսի էական խախտումները, որոնք ներկայացվում են ստորև՝

1) անտեսելով արտահերթ խորհրդարանական ընտրությունների նշանակման սահմանադրաիրավական (Սահմանադրության 93-րդ հոդված), ինչպես նաև «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքով (104-րդ հոդվածի 2-րդ մաս) ամրագրված հիմքերը, որոնց համաձայն, արտահերթ ընտրություններ նշանակելը Հանրապետության նախագահի՝ պատվիրակման ոչ ենթակա լիազորությունն է, մինչև հրաժարական ներկայացնելը տվյալ պահին վարչապետ Նիկոլ Փաշինյանը հայտարարել է արտահերթ ընտրությունների ստույգ օրը, որպիսի քայլը, ի սկզբանե, ստեղծել է հանրային իրավագիտակցությունում խեղաթյուրված ընկալում, ըստ որի՝ սահմանադրաիրավական բոլոր առանցքային որոշումների կայացումը, անկախ դրանց իրավական հիմքերից, կենտրոնացված են իր ձեռքում և միայն ինքն է ի զորու կայացնել այդպիսի վճռորոշ որոշումներ: Այսպիսի հակասահմանադրական վարքագիծը անթաքույց խաթարել է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքների երաշխավորվածությունը: Մասնավորապես, մինչև բուն ընտրական գործընթացների պաշտոնական մեկնարկը, փաստացի թեկնածու կուսակցության առաջնորդներից մեկն, ով հայտարարել էր, որ մասնակցելու է ընտրական գործընթացին, արդեն իսկ զբաղվել է նախընտրական այնպիսի քարոզչությամբ, որով ընդգծել է իր թվացյալ առավելությունը բոլոր հնարավոր քաղաքական ուժերի նկատմամբ, ինչը միջազգային իրավական փաստաթղթերում արձանագրված դիրքորոշումների համաձայն, **գնահատվում է, որպես ընտրական իրավունքի հավասարության և ազատության սկզբունքի խախտում**:

Նկատենք, որ տվյալ իրավիճակում, հրաժարական ներկայացնելու մտադրության մասին վարչապետի նախաձեռնությունն ինքնըստինքյան բավարար սահմանադրաիրավական հիմք չէր արտահերթ ընտրություններ նշանակելու, առավել ևս դրա ստույգ օրը որոշելու համար, քանզի հրաժարական ներկայացրած անձը միանգամայն իրավաչափ հիմքերով զրկվում է ոչ միայն անմիջապես վարչապետին, այլև, առավել ևս պետության գլխին վերապահված հետագա լիազորությունների իրականացման և իրավական գործընթացները տնօրինելու հնարավորություններից: Ավելին, վարչապետի հրաժարականը ինքնըստինքյան չի հանգեցնում Ազգային ժողովը արձակելուն, որպիսի պարագայում առնվազն անհիմն է նախապես միանշանակ պաշտոնապես հայտարարել արտահերթ ընտրությունների մասին: Իսկ նշված հայտարարության համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ վարչապետը ոչ միայն շրջանցել է արտահերթ ընտրություններ նշանակելու սահմանադրաիրավական կառուցակարգերն ու ընթացակարգերը, այլև միանձնյա

որոշել է նաև Ազգային ժողովի կողմից վարչապետ ընտրելու գործընթացի բաղադրիչներն ամբողջությամբ, ինչը ևս, ըստ էության, նախընտրական քարոզչության բացահայտ դրսևորում է և հաշվարկված է եղել ընտրողների իրավագիտակցության վրա ամենակարող քաղաքական գործչի կերպար ձևավորելուն: Նման գործողությունները ուղղակի վարչական ռեսուրսի ցուցադրման և դրանով գործադիր իշխանության մարմինների նկատմամբ ուղղակի դերակատարման ընդգծման ընտրական իրավունքի սկզբունքներին հակասող նպատակ են հետապնդել, որը նաև ունի համապատասխան արդյունք,

2) վերը նշված ապօրինի քաղաքական հայտարարություններին հաջորդել են արդեն պաշտոնական դիրքն առերևույթ չարաշահելու և վարչական ռեսուրսները անարգել օգտագործելու համակարգված գործողությունները: Վարչապետի պաշտոնակատարի պաշտոնն ապօրինի զբաղեցրած անձը, ոչ միայն չսպասելով մինչև նախընտրական քարոզչության, այլև ընդհանրապես ընտրական գործընթացների պաշտոնական մեկնարկին, Ազգային ժողովի օրակարգերով նախատեսված ցանկացած ելույթ անխտիր վերածել է ոչ միայն պարզապես նախընտրական քարոզչության, այլև հնարավոր քաղաքական հակառակորդներին անթաքույց զրպարտելու, նրանց պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու, հընթացս 44-օրյա պատերազմի պարտությունը, արդյունքներով, ըստ էության, կապիտուլյացիայի փաստաթուղթ ստորագրելն արդարացնելու, իսկ մեղքը քաղաքական հակառակորդների վրա բարդելու քայլերի:

Բնորոշ է հետևյալ օրինակը. 2021 թ. ապրիլի 14-ին Ազգային ժողովում, սահմանված օրակարգի հիմքով, պետք է լսվեր **<u>Կառավարության 2020 թ. ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցը</u>**: «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 127-րդ հոդվածով իմպերատիվ և սպառիչ կարգավորված է նշված զեկույցի իրականացման կարգը: Մասնավորապես, այդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է, որ *զեկույցը ներկայացնելու համար* վարչապետին տրվում է մինչև մեկ ժամ: Ժամանակի զգալի հատված նախատեսելը պայմանավորված է զեկույցի ենթակա նյութի մեծ ծավալով:

Մինչդեռ՝ Կառավարության 2020 թ. իր ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի փոխարեն, ամբիոնը Նիկոլ Փաշինյանն օգտագործել է նախընտրական քարոզչության նպատակով, որի շրջանակներում ներկայացվել են ոչ թե Կառավարության ծրագրի կատարման արդյունքները, այլ բացառապես քաղաքական հակառակորդներին նսեմացնելու, տարածքները ապօրինի հանձնելու գործընթացն արդարացնելու, իբրև Երկրի ապագայի մասին խիստ վերացական տեսլական հնչեցնելու խոսքեր: Մասնավորապես, զեկույցի սոսկ 3 րոպեների ընթացքում հնչեցվել են մի քանի վիճակագրական տվյալներ, և սկսած արդեն 4-րդ րոպեից զեկույցը վերածվել է, նախ, ռազմական գործողություններում կրած պարտության արդարացումներին: Այնուհետև, զեկույցի թեման եղել է բացառապես անկախության տարիներից սկսած պետության բոլոր ղեկավարների հայտարարությունների քննադատական վերլուծությունը, նրանց տարաբնույթ

հանցագործությունների մեջ մեղադրելը և նույն ոգուն համահունչ այլ դատողություններ: Տվյալ դեպքում, առերևույթ զրպարտանքն ուղղված է եղել բոլոր այն քաղաքական գործիչներին, որոնք քաղաքական հայտ են ներկայացրել մասնակցելու հնարավոր արտահերթ ընտրություններին: Ընդ որում, դա եղել է նախապես ծրագրավորված նախաձեռնություն, քանի որ վարչապետը զեկույց ներկայացնելիս ի ցույց է դրել տասնյակ տարիների վաղեմություն ունեցող փաստաթղթեր, որոնք որևէ աղերս անգամ չէին կարող ունենալ Կառավարության ծրագրի կատարման հաշվետվության հետ, այլ վերաբերել են բացառապես քաղաքական հակառակորդների ենթադրյալ գործունեությանը: Այսինքն հենց նպատակը արդեն իսկ սեփական նախաձեռնությամբ որոշված ընտրություններին հնարավոր քաղաքական այլ ուժերի նկատմամբ զրապարտող և հանրային միջոցները, տվյալ դեպքում Ազգային ժողովի հարթակը հենց այդպիսի ոչ իրավաչափ նպատակով օգտագործելն էր:

Հատկապես կարևոր է այս հանգամանքի ընդգծումը հենց ստեղծված պայմաններում, քանի որ վարչապետի պաշտոնական զեկույցում առանձնահատուկ տեղ են զբաղեցրել նախընտրական խոստումները, որոնք դարձյալ ապագա տեսլականի շրջանակներում է, մասնավորապես խոստումներ են հնչել ուսուցիչների աշխատավարձն էապես բարձրացնելու մասին և այլն:

Նկատենք, որ խոսքն այն զեկույցի մասին է, որը պետք է վերաբերեր ոչ թե առաջիկայում *նախատեսվող ծրագրային միջոցառումներին, այլ բացառապես հաստատված ծրագրի կատարման ընթացքին*:

Սահմանադրական օրենքով նախատեսված լրջագույն ինստիտուտի իրացման կարգի խախտմամբ, Կառավարության ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ զեկույցը նախընտրական քարոզչության վերածելը առերևույթ ոչ միայն պարզապես պաշտոնեական լիազորությունները չարաշահելու, այլև ընտրական իրավունքի էական խախտումների փաստի արձանագրում է,

3) պետք է նկատել նաև, որ 2021 թվականի ապրիլի 1-ին Ազգային ժողովը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենսդրական նախաձեռնությունը: Հատկանշական է, որ դրանով էական փոփոխություն կատարվեց ընտրական գործընթացի մեջ չնայած, որ արդեն իսկ հայտարարվել էր, որ երեք ամսից ավելի պակաս ժամկետում պետք է անցկացվեն ընտրություններ: Մասնավորապես առհասարակ վերացվեց տարածքային ընտրական ցուցակների հնարավորությունը (ռեյտինգային ընտրակարգ): Նշվածը ընդունվեց առանց ընդդիմադիր խմբակցությունների մասնակցության կամ համաձայնության: **Պետք է նկատել նաև, որ օրենսդրական փոփոխությունները լեգիտիմության խնդիր ունեն նաև այնքանով, որքանով Հանրապետության նախագահը հրաժարվեց այն ստորագրել և այն ուժի մեջ մտավ կրկին իշխանական դիրքերից հանդես եկող Ազգային ժողովի նախագահի ստորագրման հանգամանքով միայն 2021 թվականի ապրիլի 26-ին**,

4) արտահերթ խորհրդարանական ընտրության ողջ գործընթացում խաթարվել է **ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածը, որը հանդիսանալով սահմանադրական կարգի հիմունք նորմ երաշխավորում է ընտրությունների հավասարության և օրինականության սկզբունքը**, քանի որ Վարչապետի կողմից թեև ներկայացվել էր վարչապետի պաշտոնից հրաժարական, սակայն վերջինս, բացահայտ շրջանցելով Սահմանադրության հիմնադրույթները, շարունակել էր կատարել վարչապետին վերապահված լիազորությունները, այդ թվում՝ վարչապետի կարգավիճակով ելույթներ է ունեցել Ազգային ժողովում, ընդունել է որոշումներ, նախագահել է Կառավարության նիստերը, հրապարակել է Կառավարության որոշումները: Նշված ապօրինությունն էական է ոչ միայն ընդհանուր սահմանադրաիրավական ասպեկտով, այլև ընտրական իրավունքների խախտումների տեսանկյունից, քանի որ անհիմն շարունակելով պաշտոնավարել և ողջ ծավալով իրականացնելով վարչապետի լիազորությունները՝ նաև անմիջապես արտահերթ խորհրդարանական ընտրությունների ժամանակահատ-վածում, ըստ էության, խաթարել է սահմանադրական առանցքային գործընթացների բնականոն իրականացումն ու երաշխավորվածությունը, ինչն արդյունքում հանգեցրել է սահմանադրականության ճգնաժամի: Ըստ էության, Վարչապետը, յուրովի ընկալելով հրաժարականի ինստիտուտը, բացահայտ ընտրել է միանգամայն իրավաչափ նպատակին կոչված սահմանադրաիրավական հիմնադրույթները նեղ, կուսակցական շահերին հարմարեցնելու և անթաքույց առավելություններ ձեռք բերելու տարբերակը:

Հատկանշական է, որ նշված հարցի վերաբերյալ մեր կողմից ներկայացվել էր համապատասխան **հայցադիմում վարչապետի պաշտոնակատարի կողմից Կառավարության որոշման ստորագրման և հրապարակման իրավաչափության մասով, այնքանով, որքանով նման կարգավիճակը ինքնին բացառում էր «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված բացառապես վարչապետին կամ պատշաճ վարչապետի պաշտոնատակարին վերապահված լիազորությունները**: Վարչական դատարանը նշված հայցադիմումը **ընդունել է վարույթ (թիվ ՎԴ/5525/05/21)**: Այսինքն, նշված հարցի առերևույթ խնդրահարույց լինելու առկայության իրավական շեմը **առնվազն հաղթահարվել է Վարչական դատարանի կողմից 03.06.2021 թվականի վարույթ ընդունելու որոշմամբ**:

Հարկ ենք համարում նկատել նաև, որ հիշյալ հակասահմանադրական քայլով շրջանցվել է ընտրական իրավունքի «հավասարության» սկզբունքը, որի իմպերատիվ պահանջն է, որպեսզի բացառվի արտահերթ խորհրդարանական ընտրություններին փաստացի հայտ ներկայացրած ուժերից որևէ մեկի կողմից անիրավաչափ առավելության դրսևորումը, ինչը տվյալ դեպքում չի ապահովվել: Նշվածի լույսի ներքո, էական է նաև, որ դեռևս 2021 թվականի մարտի 31-ին Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արսեն Թորոսյանը հրապարակավ հայտարարել էր. ««Իմ քայլի» նախընտրական շտաբը համակարգելու են չորս հոգի՝ ես, Ռոմանոս Պետրոսյանը, Արայիկ Հարությունյանը, Սուրեն Պապիկյանը: Պապիկյանը կլինի գլխավոր համակարգողը, կարելի է ասել՝ շտաբի պետը»: Նշվածը կրկին վկայում է արտահերթ խորհրդարանական ընտրությունների ընդհանուր գործընթացի մեջ վարչական

միջամտության և ռեսուրսի չարաշահման մասին՝ այնքանով, որքանով արտահերթ խորհրդարանական ընտրությունների գործընթացը ժամանակացույցի, նույնիսկ օրվա մասով կազմակերպվել է իշխանության կողմից և մարտի 31-ին արդեն իսկ հայտարարվել էր շտաբի ձևավորման մասին այն պայմաններում, երբ որևէ այլ ուժ հստակ տեղեկություն չուներ և/կամ երաշխիք՝ ընտրությունների օրվա և կազմակերպման մասին: Փաստացի բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք մարտի 31-ից արդեն իսկ ձևավորել են նախընտրական շտաբ: Պետք է նկատել, որ նշվածն ընդհանուր ընտրական գործընթացի էական խախտում է. ի թիվս այլի ընտրական գործընթացների փուլում վարչական ռեսուրսների չարաշահմանն առնչվող՝ Վենետիկի հանձնաժողովի 2013թ. CDL-AD(2013)033 զեկույցում վարչական ռեսուրսը բնութագրվում է որպես ընտրությունների ընթացքում գործող պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների՝ մարդկային, ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսները, հանրային զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ նրանց ունեցած վերահսկողության հանգամանքը, ինչպես նաև իրենց դիրքով պայմանավորված՝ հանրային օբյեկտների և ռեսուրսների նկատմամբ ունեցած հասանելիությունը, ինչը կարող է վերածվել քաղաքական կամ այլ ձևաչափի աջակցության:

Միջազգային իրավական փաստաթղթերում միանշանակ արձանագրված է այն դիրքորոշումը, ըստ որի՝ ընտրական իրավունքի ազատությունը չի սահմանափակվում զուտ կոնկրետ ընտրողի կամահայտնության վրա անմիջական ազդեցությամբ, այն ավելի լայն շրջանակներ է ընդգրկում և ներառում է նաև այնպիսի դրսևորումներ, ինչպիսիք են՝ հետապնդումները, թշնամության և ատելության ոճաբանությունը, վարչական ռեսուրսների օգտագործմամբ նախընտրական քարոզչության համար չնախատեսված ամբիոններն օգտագործելը և այլն,

5) ընտրական գործընթացի և ընտրությունների հավասար կազմակերպման իմաստով էական է համարվում նաև, որ մայիսի 10-ից արդեն իսկ ձևավորվող նախընտրական շտաբերի պատասխանատուների և ակտիվի հետ հանդիպման նպատակով մեր կողմից դիմում էր ներկայացվել իշխանական կուսակցության անդամ, միաժամանակ Էջմիածին համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանին, որպեսզի հնարավորություն ընձեռվի օգտվելու Էջմիածին համայնքում գտնվող դահլիճից: Դրան ի պատասխան, Դիանա Գասպարյանի կողմից տրամադրվել էր մերժում այն ակնհայտ անհիմն «պատճառաբանությամբ», որ. « … նպատակահարմար չի գտնում ….»: Համանման դիրքորոշում էր ներկայացվել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից Գավառի մշակութային դահլիճի համար՝ նույնիսկ քարոզարշավի ժամանակահատվածում:

Այսպիսով, խուսափելով վարչական որոշումներ կայացնելիս, որևէ անհրաժեշտ հիմնավորում ներկայացնելու օրենսդրական պահանջից («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 57-րդ հոդված) և գործելով նույնաբնույթ և, ըստ էության, համակարգված եղանակով, իշխանության ներկայացուցիչները հնարավորինս սահմանափակումներ են կիրառել ընտրական գործընթացին մասնակցած հակառակորդ քաղաքական ուժերի նկատմամբ, ինչը

հանգեցրել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 8-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքի խաթարմանը, իսկ արդյունքում՝ ընտրական իրավունքի հավասարության խախտմանը:

Հավելենք, որ ընտրական իրավունքի հավասարությունը միջազգային իրավական փաստաթղթերով ևս չի սահմանափակվում սոսկ քվեարկության ձայների հավասարության չափանիշով: Հավասարության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ ոչ միայն վարչական մարմինները, մինչդատական վարույթ իրականացնող ստորաբաժանումները, այլև արդարադատություն իրականացնող դատարանները զերծ են մնում կրկնակի չափանիշների կիրառումից,

6) ընտրական գործընթացի փուլում, այդ թվում, հենց քվեարկության օրը՝ 2021 թվականի հունիսի 20-ին, պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների պաշտոնյաների կողմից մշտապես և համակարգված օգտագործվել է մեծածավալ վարչական ռեսուրս: Ընդ որում, ընտրական իրավունքի, **հատկապես հավասարության սկզբունքի լրջագույն խախտումների հանգեցրած վարչական ռեսուրսի ապօրինի օգտագործումն իրականացվել է տարաբնույթ եղանակներով՝** թե ծառայողական տրանսպորտային միջոցների, գույքի և այլ միջոցների օգտագործմամբ, թե փաստացի գործադիր իշխանության համակարգում գտնվող մարմինների միջոցով (ինչպես օրինակ Ոստիկանության ծառայողների համակարգային և զանգվածային ներգրավման դեպքերը՝ ցանկացած հանրային հավաքի ընթացքում), դրանով արտաքուստ ապահովելով քաղաքական հակառակորդների նկատմամբ, այսպես կոչված, սառեցնող ազդեցություն (chilling effect), ինչպես նաև ստեղծելով իբրև բարձր վարկանիշ երաշխավորող հավաքի մասնակիցների մեծաքանակության պատրանք (մարզպետարանների աշխատակազ-մերի, վարչապետի աշխատակազմի աշխատակիցների ներգրավման դեպքերը և այլն): Ընդ որում, բոլոր այս խախտումներն իրականացվել են բացահայտ, ինչը կարող է վկայել այն մասին, որ եղել է մեկ կենտրոնից նախապես տրված երաշխիք առ այն, որ իրավասու իրավապահ մարմինները ոչ միայն չեն արձագանքի խախտումներին, այլև իրենք կունենան ակտիվ մասնակցություն, ինչը և տեղի է ունեցել:

Պետք է նկատել, որ առկա են նաև հիշյալ և այլ նմանաբնույթ փաստերը արձանագրած բազմաթիվ այլ տեսանյութեր, որտեղ, օրինակ՝ դպրոցների, կրթական հաստատությունների ներկայացուցիչները իրենց պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով, հօգուտ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության իրականացրել են ապօրինի գործողություններ, նույնիսկ հանրային հավաքներին հարկադրաբար մասնակցություն ապահովելու միջոցով: Ընդ որում, մասնակցության պատրանք ստեղծվել է, հիմնականում դպրոցական աշակերտների ներգրավմամբ: Նշված հարցի վերաբերյալ մեր կողմից ներկայացվել էր համապատասխան դիմում Կենտրոնական ընտրական հանձնաժողով, որը, ցավոք, որևէ կերպ պատշաճ քննության առարկա չէր դարձել և 2021 թվականի հունիսի 19-ի որոշմամբ մերժվել էր: Նշված որոշումը բողոքարկելու հայցադիմումը ներկայումս վարչական դատարանում է և վճռի հրապարակման օր է նշանակվել 2021 թվականի հունիսի 26-ը:

Պետք է նկատել նաև, որ վարչական ռեսուրսի և ընտրական գործընթացի առանցքային սկզբունք հանդիսացող հավասարության երաշխիքը խախտվել է նաև հենց «լռության օրը»՝ 2021 թվականի հունիսի 19-ին: Մասնավորապես, այդ պահին արձակուրդից վերադարձած վարչապետի պաշտոնատակար Նիկոլ Փաշինյանը, ով հանդիսանում է Քաղաքացիական պայմանագիր կուսակցության պատգամավորի թեկնածու, կառավարական առանձնատնից, հրապարակավ ելույթ էր ունեցել, մի քանի անգամ շեշտելով **«անպայման-անպայման մասնակցել ընտրություններին»**: Նշվածը հերթական անգամ վարչական ռեսուրսի անթաքույց օգտագործում էր, և ոչ թե միայն «լռության օրվա» պահանջների խախտում: Այս առնչությամբ թեպետ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը արձանագրեց նշված խախտման փաստը, կիրառելով՝ «նախազգուշացում», սակայն անդրադարձ չի արվել վարչական ռեսուրսի օգտագործմանը: Գտնում ենք, որ առհասարակ նշված խախտումը ինքնին խաթարել էր ընտրական իրավունքի **հավասարության սկզբունքը**, քանի որ որևէ այլ քաղաքական ուժի առավել ևս առաջին համարը զբաղեցնող անձ նման ուղերձով, կոչով հանդես չէր եկել, իսկ երբ այն կատարվում է կառավարական առանձնատնից «ի ցույց դնելով» վարչապետի պաշտոնի կարգավիճակը և ազդեցությունը, դրա հետևանքները անհամեմատ առավել ազդեցիկ են ընկալվում: Այսպիսով, այդպիսի վարքագծով Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը ոչ միայն ստացավ անօրինական և հավասարությունը խախտող առավելություն՝ քվեարկության օրվանից ժամեր առաջ, այլև մեկ անգամ ևս հանրային ինքնագիտակցության վրա փորձեց ազդել այն մտայնությամբ, որ մասնակցության բարձր տոկոսն իբրև իրենց չի անհանգստացնում, քանի որ իրենք չեն պատրաստվում չմասնակցած ընտրողների քվեները յուրացնել: Այլ կերպ ասած, այս քարոզչական հնարքը բնավ կապ չուներ իբր թե ընտրողներին իրենց քաղաքացիական պարտքը կատարելուն ուղղված տրամադրություններ ձևավորելուն:

Այս ամենի համատեքստում ընտրական իրավունքի հավասարության սկզբունքի խախտումների փաստն առավել զգալի է, քանզի նույն ժամանակահատվածում նույնաբնույթ հայտարարությունների համար ոչ միայն քրեական հետապնդում է հարուցվում բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր «Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու՝ Արմեն Չարչյանի նկատմամբ, այլև վերջինս, նախ, ապօրինի ձերբակալվում է (դատարանի որոշմամբ ապօրինի ձերբակալումը վերացվել է), իսկ այնուհետև՝ կալանավորվում: Հատկանշական է, որ ձերբակալման ոչ իրավաչափ լինելը հաստատվել է հենց 2021 թվականի հունիսի 20-ին, ինչը ևս ուղղակի կապված է ընտրական գործընթացի հետ,

Երկակի չափանիշների կիրառման անընդունելի, հակասահմանադրական գործելաոճին իրավապահ համակարգին ներգրավելը ևս անթաքույց վկայում է մի կենտրոնից, համակարգված գործընթացներ նախաձեռնելու մասին:

Քրեական հետապնդումների աննախադեպ զանգվածային դրսևորումները վերը նշված բնույթի դեպքերով չեն սահմանափակվում: Քվեարկության օրվան անմիջապես նախորդող օրին, հատկապես «Հայաստան» դաշինքի մի շարք գրասենյակներում

հատկապես Երևանում տեղակայված իրականացվել են խուզարկություններ՝ համակիրների վրա սպառնալիքի ակներև տպավորություն ստեղծելու ակնհայտ նպատակով: Նման վարքագիծ դրսևորվել է նաև հենց քվեարկության օրը Սյունիքի մարզում: Բնորոշ է այն, որ այդ խուզարկությունները որևէ արդյունք չեն տվել, ինչը վկայում է ոչ միայն դրանց ակնհայտ անհիմն լինելու, այլ դատավարական հարկադրանքի այդ տեսակը՝ քաղաքական հակառակորդների նկատմամբ սոսկ բռնություն կիրառելու «հարմարավետ» հնարք ընկալելու իրավամտածողության մասին,

7) ընտրական գործընթացը իրականացվել է նաև աննախադեպ ատելության խոսքի համակարգված տարածմամբ, ինչը ևս անդառնալի կերպով հանգեցրել է ընտրական իրավունքի հիմնարար սկզբունքների խախտումներին: Մասնավորապես, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզչության ընթացքում՝ տարբեր հանդիպումների ժամանակ հանդես է եկել ատելության և բռնության հետևյալ հանրային մատչելի տեսանյութերում առկա կոչերով.

- 08.06.2021 թվականին՝ «**Դրանց սաղին բռնելու եմ՝ շինեմ**» (2:38-2:44),
- 08.06.2021 թվականին՝ «**Ճակատից շարեմ կասեք բռնությունա**» (5:50-6:30),
- 08.06.2021 թվականին՝ «**Հանկարծ չփորձեք թպրտալ**», «Փաշինյանը զգուշացրեց՝ ընտրություններից հետո լինելու է վենդետա, ջարդուփշուր» (3:46-3:57),
- 08.06.2021 թվականին՝ «**կարճ ասած՝ էդ համայնքների ղեկավարները ռադ են լինելու, վենդետա է լինելու**....» (1:19-1:25):
- 13.06.2021 թվականին՝ «**Ընտրություններից հետո այ էս պողպատե մանդատով գալու ենք ձեր հետևից**» (1:45-1:50),
- 14.06.2021 թվականին՝ «**Ավշարի այս հրապարակում անձամբ ասֆալտին եմ պառկեցնելու**» (0:38-0:41),
- 15.06.2021 թվականին՝ «**կկոտրենք, կկտրենք Սյունիքը մնացած Հայաստանին հակադրելու փորձ անող ամեն մի ձեռք**» (1:17-1:26),
- 15.06.2021 թվականին՝ «բոլորիդ լիազորում եմ տեղում **պողպատե մանդատավորել ստահակներին**» (0:50-0:59) և այլն:

Նշվածի վերաբերյալ կրկին Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որևէ իրավաչափ միջոց չի ձեռնարկել, թեպետ՝ նման վարքագծով և նման ատելության խոսքի տարածմամբ փաստացի ուղղակի սպառնալիքների են ենթարկվել քաղաքական հակառակորդ հանդիսացող ուժերը և նրանց համակիրների հոծ շրջանակները, որոնք արձանագրվել են միջազգային դիտորդական առաքելություն իրականացրած կառույցների նախնական զեկույցներում, որոնց կանդրադառնանք ստորև: Վարչական դատարանը 17.06.2021 թվականի ՎԴ/6861/05/21 վարչական գործով, որը վերաբերում է հենց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից դրսևորած փաստացի անգործությանը՝ վճռով արձանագրել է. «Դատարանն արձանագրում է, որ ընտրություններին մասնակցող կուսակցության կամ թեկնածուի կողմից նախընտրական քարոզչության ընթացքում ցանկացած կոնտեքստով,

անձնավորված կամ անորոշ թվով անձանց ուղղված, որոշակի կամ անորոշ ձևակերպմամբ վերը շարադրված մտքերը պարունակող արտահայտություններն օբյեկտիվորեն և **ողջամտորեն կարող են ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիք, հետևաբար սույն վարչական գործով հայցվորի փաստարկներն առ այն, որ երրորդ անձ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից վերը նշված տեսաձայնագրություններում հնչեցված արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող էին ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիքներ, հիմնավոր են, ուստի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված գործիքակազմի կիրառման տեսանկյունից առաջադրված նախապայմանը՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումը, սույն դեպքում առկա է**:»,

8) ընտրական գործընթացի փուլում խախտվել են ազատ և հավասար ընտրական սկզբունքների տարրերը նաև այնքանով, որ «Հայաստան» դաշինքի մայիսի 10-ից սկսված հարուրավոր շտաբերի ներկայացուցիչների, ակտիվի ներկայացուցիչների պարբերաբար բերման են ենթարկել Ոստիկանություն և, այսպես կոչված, ստուգողական գործողություններ են կատարել՝ առանց որևէ պատշաճ հիմքի: Այն, որ համընդհանուր սպառնալիքի ու վախի մթնոլորտ ձևավորելուն հանգեցնող բոլոր այդ հարկադրանքի միջոցները թելադրված են եղել ոչ թե իրական և օրինական հիմքերով, այլ անհիմն ու արհեստական գործոններով, հատկապես, հավաստվում է այն փաստարկներով, որ նշված անձանից, ըստ էության, ոչ մեկին մեղադրանք չի առաջադրվել, նույնիսկ կասկածյալի կարգավիճակ չի տրվել: Ընդ որում, բացի համընդհանուր վախի մթնոլորտ ձևավորելուց, այդպիսի ապօրինություններով անդառնալի վնաս է հասցվել «Հայաստան» դաշինքի քարոզչական աշխատանքներին, քանզի առանցքային աշխատակիցները անհարկի տևական ժամանակով զրկված են եղել շտաբներում իրենց բնականոն աշխատանքներն իրականացնելու տարրական հնարավորությունից:

Համանման մոտեցում ընդհանրապես չի իրականացվել իշխանական դիրքերից հանդես եկող Քաղաքացիական պայմանագիր կուսակցության և նրանց քաղաքական դիրքորոշումներին սատարող այլ թեկնածու կուսակցությունների նկատմամբ: Այս ապօրինի գործելաոճը անթաքույց միտված է եղել վարչական ռեսուրսների օգտագործմամբ քարոզչական կտրվածքով այնպիսի տպավորություն թողնելուն, որ իբր «Հայաստան» դաշինքը զբաղված է զանգվածային ընտրախախտումներով, և իրենք համարժեք միջոցներ են ձեռնարկում իբր այդպիսիք կանխարգելելու համար: Բնորոշ է այն, այդ դեպքերի առնչությամբ իրավապահ մարմինների պաշտոնական լրատվական կայքերը հետևողականորեն տարածել են խուզարկությունների, անձանց բերման ենթարկելու կամ ձերբակալելու վերաբերյալ խեղաթյուրված տեղեկություններ, սակայն լռության են մատնել այն փաստերը, որ դրանց արդյունքներով ոչինչ չի հայտնաբերվել և հիմնավորվել:

Այդպիսի վարքագիծը շարունակվել է նույնիսկ «լռության օրվա» դրությամբ, և հենց քվեարկության օրը՝ Սյունիքի մարզում, Արմավիրի մարզում, Արարատի մարզում և այլ տարածքներում: Նշված համակարգված գործողությունները ևս ուղղակի և էապես ազդել են ընտրական գործընթացի և քվեարկության արդյունքների վրա,

9) հատկանշական է նաև, որ 2021 թվականի մայիսի 10-ից հետո, երբ ըստ «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի «*Ընտրություն նշանակվելուց հետո կարող են կազմավորվել ընտրական շտաբներ*» «Հայաստան» դաշինքը նախաձեռնել է հենց ընտրական շտաբների ձևավորումը, որոնց վրա տեղադրվել են դաշինքի անվանմամբ պաստառներ, արձանագրվել են պաստառների վնասման ու ոչնչացման դեպքեր, որոնց կապակցությամբ ներկայացվել են հաղորդումներ և ՀՀ իրավապահ մարմինների կողմից նախապատրաստվել են նյութեր և հարուցվել քրեական գործեր: Սակայն չնայած, որ նման արարքների հետ առնչություն են ունեցել նաև «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ ուղղակի կամ անուղղակի առնչություն ունեցող անձինք՝ որևէ մեկը չի ձերբակալվել: Բոլոր դեպքերում նման ապօրինությունները բնականաբար բացասական ազդեցություն են ունեցել «Հայաստան» դաշինքի վարկանիշի և հեղինակության վրա և վախի մթնոլորտ են առաջացրել դաշինքի համակիրների և հնարավոր քվեարկողների մոտ,

10) կարևոր է նշել նաև, որ փաստացի քվեարկության օրվա պայմաններում՝ ս.թ. հունիսի 20-ի վաղ առավոտյան մայրաքաղաք Երևանի բազմաթիվ փողոցներում համատարած թափվել են «Հայաստան» դաշինքը և նրա ղեկավար Ռ.Քոչարյանին վարկաբեկող և զրպարտող բովանդակությամբ թռուցիկներ, ինչը բնականաբար խիստ բացասական ազդեցություն է ունեցել «Հայաստան» դաշինքի վարկանիշի վրա և հակակրանք առաջացրել վերջինիս նկատմամբ, ինչն աներկբա ազդել է ընտրողների կողմնորոշման վրա: Պետք է նկատել, որ դրա վերաբերյալ անհապաղ հայտարություն էր տարածել «Հայաստան» դաշինքը դրա մասով ուշադրությունը հրավիրելով Ոստիկանությանը և Քաղաքապետարանին, սակայն չնայած ընտրությունների օրվա նման առանցքային պայմանին՝ քվեարկության օրվա ընթացքում որևէ անձ բերման չէր ենթարկվել, որևէ անձ չէր ձերբակալվել, իսկ զրպարտող և ատելություն տարածող թռուցիկները վերացվել են միայն ժամեր անց,

11) հատկանշական են հետապնդումների և այդպիսով ընտրության արդյունքների վրա ազդելուն ուղղված այլ միջոցների կիրառման փաստերը: Այսպես, նախընտրական գործընթացի ամենավաղ շրջանում ՀՀ ՀՔԾ-ի կողմից մեղադրանք է առաջադրվում արդեն իսկ հրապարակավ նախքան այդ հաստատված «Հայաստան» դաշինքի նախընտրական կենտրոնական շտաբի պետի Արմեն Գևորգյանի նկատմամբ, ով նաև «Հայաստան» դաշինքի կողմից առաջադրված պատգամավորի թեկնածու է ընտրական գործընթացի փուլում մի շարք անձանց, որոնք որևէ կերպ իրենց աջակցությունն են ցուցաբերել «Հայաստան» դաշինքին, անգամ ոչ հրապարակային ձևերով, հեռացրել են հանրային ծառայությունից, ինչպես նաև մասնավոր սեկտորում աշխատանքից կամ կիրառել են տարաբնույթ սահմանափակումներ (Գյումրի թիվ մեկ պոլիկլինիկայի տնօրեն, Արդարադատության նախարարության Հարկադիր

կատարման ստորաբաժանման պետ և այլ բազմթիվ դեպքեր, որոնց մասին հրապարակավ հաղորդումներ են ներկայացրել տուժողները, սակայն դարձյալ պատշաճ ու համարժեք արձագանք դեռևս չի եղել),

12) մինչև 2021 թվականի հունիսի 10-ը հազարավոր անձինք, որոնք ստիպված տեղափոխվել էին ՀՀ մշտական բնակության և/կամ ունեին ՀՀ անձնագիր, հնարավորություն չեն ունեցել մասնակցելու քվեարկությանը, քանի որ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից, առանց որևէ իրավաչափ հիմնավորման կամ պատճառաբանման, որդեգրվել էր տարբերակված, անսահմանափակ հայեցողական մոտեցում: Այսպիսի վարչարարությամբ նշված պետական մարմինը, ըստ էության, խախտել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասն» օրենքի 6-րդ հոդվածով ամրագրված հայեցողական լիազորությունների սահմանափակման սկզբունքը:

Նման հարցերով դիմումների՝ անհասկանալի և խիստ հայեցողական կտրվածքով բավարարումը կամ մերժումը, թերևս, վերը նշված փաստարկների հետ համակցության ու համադրման արդյունքում ևս կարող է պայմանավորված լինել զուտ դիմողների քաղաքական հայացքներով, և ոչ թե որևէ իրավական հանգամանքով, քանի որ պարզապես բացակայում է որևէ իրավական հիմք՝ ՀՀ քաղաքացու անձնագրով օժտված անձին քվեարկության մասնակցելու վերաբերյալ դիմումը մերժելու համար,

13) Ոստիկանության կողմից ընտրողների ռեգիստրի և հասցեների վերաբերյալ տեղեկությունները, թեև հրապարակվել էին Ոստիկանության կայքում, սակայն «ՀՀ ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի ուղղակի հակադրմամբ նախատեսվել էր հավելյալ անհիմն պահանջ՝ նույնականացման քարտի միջոցով մուտք գործելը սահմանափակելու վերաբերյալ: Նշված սահմանափակումը ևս էական ազդեցություն է ունեցել ընտրական գործընթացի պատշաճ կազմակերպման վրա: Քանզի այն, լինելով ակնհայտ ապօրինի նախաձեռնություն, հանգեցրել է ընտրություն-ներին մասնակցելու տեսանկյունից քաղաքացիների մի որոշակի հատվածի համար չնախատեսված պարտականությունների, որոնց հաղթահարումը ավելորդ խոչընդոտ է դիտարկվում ընտրական իրավունքի ազատության սկզբունքի տեսանկյունից,

14) ընտրությունների «հավասար» լինելու առանցքային տարրը խախտվել է նաև այն փաստի ուժով, որ Հանրային հեռուստաընկերությունը փաստացի գրաքննություն է իրականացրել նախընտրական քարոզչության գրեթե բոլոր մասնակիցների նկատմամբ, բացառությամբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության: Ընդ որում, որպես նախընտրական քարոզչության հոլովակ, այն ներկայացրել և հեռարձակվել էր մի անհայտ անձի տեսահոլովակում, որում օգտագործվում էին «Ռոբասերժական բանդա, Հայասպան դաշինք, Ազգասպան դաշինք, Ազգասպան ծրագիր, Գողապետություն, նախկին գողապետեր, Դուք 20 տարի շարունակ հանձնել եք Արցախը» և նման ձևակերպումներ, միաժամանակ՝ իրացնելով «Հայաստան» դա-շինքի տարբերանշանը, փոխելով այն՝ «Հայասպան» դաշինքի: Նշված վարքագծի վե-րաբերյալ որևէ գրաքննություն Հանրային հեռուստաընկերության կողմից չի կա-տարվել, որևէ արձագանք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից չի եղել,

15) ընտրությունների ազատ լինելու սկզբունքի երաշխավորման համար պարտադիր վավերապայման է ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողների տվյալների հասանելիությունը: Մինչդեռ՝ ընտրություններին մասնակցել են հազարավոր անձինք (ինչպես օրինակ համաձայն առերևույթ տվյալների 10993), որոնց **տվյալները պահվել են գաղտնի, քվեարկության վայրը պահվել է գաղտնի և հասանելի տեղեկատվություն առկա չի եղել**: Ավելին՝ ընտրություններին հնարավոր խախտումների և կեղծիքների կանխարգելման համակարգերը (ինչպես օրինակ անձնագրի ընտրատարածքային տեղամասում հաշվառելը) առհասարակ առկա չի եղել հազարավոր անձանց պարագայում: Նշվածը ինքնին անհնարին է դարձրել այդպիսի կարգավիճակ ունեցող անձանց մասով պատշաճ հսկողական և վերահսկողական մեխանիզմների իրականացումը: Փաստացի նշված խնդիրը առհասարակ որևէ ճանապարհով հաղթահարման ենթակա չէ և բոլոր այն ընտրական տեղամասերում որտեղ առկա են անձանց քվեաթերթիկներ որոնք մինչ այդ պատշաճ կերպով ինքնության ստուգում չեն անցել (ինչպես իրականացվում է անձնագրով կամ նույնականացման քարտով, որը ՀՀ օրենսդրության համաձայն հավասարեցված է անձնագրին) անվավեր ճանաչելու ակնհայտ հիմք են պարունակում: Անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ առհասարակ նշված հարցի վերաբերյալ կամ առնվազն ընտրական տեղամասերի (այսինքն՝ փաստացի քվեարկության վայրի պարզումը, որպեսզի հսկողական մեխանիզմներ մշակվեն) տեղեկատվության տրամադրումը ԿԸՀ-ի կողմից մերժվել էր հղում տալով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 12-րդ մասին, դրանով առհասարակ վերահսկողական որևէ մեխանիզմ հստակ բացառելով: Տեղին է նշել նաև, որ առկա են բազմաթիվ ահազանգեր ՀՀ տարածքից բացակայող անձանց ռեգիստրի տվյալներում առկայության, քվեարկության մասով: Նշվածի տեսանկյունից անվավերության տարրեր են պարունակում նաև թվով 109618 քվեաթերթիկները այնքանով, որքանով հնարավոր է առնվազն, որ հենց այդ խնդրի հետ առնչությունը ուղղակի առկա լինի, քանի որ անձնագիրը միայն մուտքագրվել է մասնագետի միջամտությամբ,

16) քվեարկության օրվա դրությամբ արձանագրվել էին մի շարք խախտումներ, այդ թվում՝ «Հայաստան» դաշինքի վստահված անձանց, դիտորդների և պատգամավորի թեկնածուների և ՁԼՄ-ների կողմից: Դեռևս չպարզված միջամտության արդյունքում, միայն «Հայաստան» դաշինքի քվեաթերթիկներն ունեին որոշակի տարբերանշան, ինչը այդպիսիք անվավեր ճանաչելու անխուսափելի ռիսկ էր պարունակում: Հաշվի առնելով, որ նշված խնդիրը ի հայտ էր եկել հենց քվեարկության օրվա նախորդող օրը, այն ևս հաղթահարելու և/կամ լուծելու որևէ մեխանիզմ չուներ:

Ընդ որում, միաժամանակ մի շարք ընտրական տեղամասերում՝ անմիջապես ձայների հաշվարկի ժամանակ տեղի են ունեցել հոսանքազրկումներ, որոնք արդեն իսկ հիմնավոր կասկածի տակ են դնում ընտրական տեղամասերում քվեարկության արդարացիությունը, այդ թվում՝ մի շարք հնարավոր զանգվածային ապօրինությունների և ընտրական կեղծիքների կազմակերպման, դրանք թաքուն, անտեսանելի դարձնելու տեսանկյունից: Բնորոշ է այն, որ Քաղաքացիական

պայմանագիր կուսակցության պատգամավորի թեկնածու Հայկ Սարգսյանը, քվեարկության դեռևս ընթացքի մեջ լինելու պայմաններում, հրապարակել է «Հայաստան» դաշինքին դեմ հակաքարոզ, որի մասով չի արձանագրվել որևէ իրավական հետևանք կամ կանխարգելիչ գործողություն,

17) ընտրական իրավունքի համակարգված խախտումների մասին են վկայում նաև այն մեծաքանակ տեսանյութերը, որոնցից ակնհայտ են դառնում զինվորներին սպաների կողմից ուղղորդելու, քվեատուփերում արդեն իսկ պատրաստի ծրարները վերցնելու և տարածքային հանձնաժողովի կողմից իրենց հանձնված ծրարը, առանց այն բացելու, աղբարկղը նետելու, ինչպես նաև սպաների կողմից անմիջապես քվեարկության տուփի մոտ քվեարկությանը հետևելու փաստերը: Նկատենք, որ այս խախտումների համակարգվածության մասին է վկայում այն, որ ճշգրիտ նույնատեսակ խախտումներ են արձանագրվել միանգամայն տարբեր վայրերում: Ավելին փաստացի նշված անձանց ընտրական տեղամաս էին տեղափոխում միավորված և իրենց համար նախատեսված ավտոմեքենայով, ինչն ինքնին անհաղթահարելի ռիսկ էր սահմանում ընտրության ազատ արտահայտման առանցքային սկզբունքի պահպանման մասով,

18) հրապարակվել են նաև բազմաթիվ տեսանյութեր, այդ թվում՝ ուղիղ եթերով արձակված, երբ միևնույն ծրարում եղել է միաժամանակ երկու քվեաթերթիկ, սակայն անվավեր է ճանաչվել ոչ թե առանց դրոշմանիշի, այլ չդրոշմավորված թիվ «3» քվեաթերթիկը,

19) պարզ չէ, առհասարակ ինչպես կարող են պետության պոզիտիվ պարտականություն ենթադրող ընտրական տեղամասերի արձանագրությունների և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակումների մեջ լինել այդչափ ծավալի անճշտություններ, որոնք ի հայտ եկան Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հայտարարված վերահաշվարկի արդյունքներով: Ըստ այդ տվյալների՝ միայն 2021 թվականի հունիսի 23-ի դրությամբ 50 ընտրական տեղամասերում իրականացված վերահաշվարկի արդյունքում փոփոխվեց և ավելացավ «Հայաստան» դաշինքին տրված ձայների թվաքանակը, ինչը ինքնին թույլ է տալիս պնդելու, որ այդպիսի իրավիճակ կարող էր ի հայտ գալ ցանկացած այլ 50 ընտրական տեղամասում և այդպես շարունակ,

20) «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության բոլոր նախընտրական հավաքներն ուղեկցվել են համակիր անձանց հավաքների վայր տեղափոխելու եղանակով: Սա ոչ միայն խեղաթյուրել է հանրության ինքնագիտակցությունը՝ թյուր տպավորություն ստեղծելով իբր այդ քաղաքական ուժի ու իր առաջնորդի կտրվածքով, այլև հանգեցրել է վարչական ռեսուրսների քողարկված վատնումների: Ընդ որում, Նիկոլ Փաշինյանն ինքն է Սյունիքում կազմակերպված հավաքների ժամանակ ընդունել, որ մարդկանց տեղափոխումը կատարվել է իր նախաձեռնությամբ: Ավելին ըստ առկա հրապարակված տեսանյութի օրինակ՝ Արմավիրի մարզ կատարած այցի ընթացքում դպրոցներում դասապրոցեսը խաթարվել էր, քանի որ մարզպետարանի կրթության վարչության պատասխանատուն տեղեկացրել էր, որ առկա է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության պատգամավորի թեկնածու Նիկոլ

Փաշինյանի հանրային հավաքը: Պետք է նկատել, որ Արմավիրի և բոլոր այլ մարզերի՝ Մարզպետերը նշանակվել են հենց Նիկոլ Փաշինյանի՝ որպես վարչապետ պաշտոնավարելու ընթացքում, ինչը կրկին փաստում է վարչական ռեուսրսի օգտագործման ուղղակի հանգամանքը,

21) նկատենք, որ առանձին դեպքերում նույնաբնույթ և այլ խախտումներ են հայտնաբերվել նաև միջազգային դիտորդական առաքելությունների կողմից: Այսպես, օրինակ՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի «Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելության» 2021 թ. հունիսի 20-ի «Նախնական արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ հայտարարությամբ» արձանագրվել են հետևյալ խախտումները, ինչպես նաև խախտումների վերաբերյալ հաղորդումները՝

- ընտրակաշառքի դեպքեր,
- ճնշումներ ընտրողների կամքի վրա,
- անթույլատրելի կուտակումներ ինչպես տեղամասերում, այնպես էլ՝ հարակից տարածքներում,
- պաշտոնյաների կողմից այնպիսի պայմաններում քարոզարշավ իրականացնելը, որը խնդրահարույց է և դժվար է սահմանազատել, **որպես պաշտոնական դիրքի չարաշահումից զերծ գործունեություն**,
- Նիկոլ Փաշինյանի կողմից խախտվել է «լռության օրը»,
- ընտրական գործընթացի ծախսերը հնարավոր է եղել թաքցնել, ինչի հնարավորությունը տվել է օրենսդրությունը,
- բազմաթիվ ոտնձգություններ են կատարվել իրենց մասնագիտական պարտականությունները **կատարած լրագրողների նկատմամբ**,
- ընտրատեղամասերի 7 տոկոսի մոտակայքում եղել են քարոզչական նյութեր,
- առանձին տեղամասերում գտնվել են ոչ իրավասու անձինք,
- արձանագրվել են քվեարկության գաղտնիության խախտումներ, իսկ ընտրատեղամասերից 2 տոկոսում արձանագրվել են չօգտագործված քվեաթերթիկները դուրս հանելու դեպքեր,
- ձայների վերահաշվարկով որոշ տեղամասերում արձանագրվել են էական շեղումներ:

Դիտորդական առաքելություն իրականացնող «Ականատես» կազմակերպությունը արձանագրել է հետևյալ խախտումները՝

- թույլ են տրվել վարչական ռեսուրսների բացահայտ չարաշահման դեպքեր ինչպես նախընտրական քարոզչության, այնպես էլ բուն քվեարկության շրջանակներում,
- արձանագրվել են հանրային հեռուսատատեսության կողմից ոչ հավասարակշռված լուսաբանումներ,
- քարոզչական ծախսերի վերահսկման օրենսդրական հիմքերը կատարյալ չեն և թույլ չեն տալիս լիարժեք բացահայտելու դրանց իրավաչափությունը,
- պարբերաբար թշնամության և ատելության «խոսույթ» է տարածվել «ՔՊ» կուսակցության առաջնորդի կողմից,

- «ՔՊ» կուսակցության միջոցառումների ընթացքում պարբերաբար խոչընդոտել են դիտորդական առաքելության բնակոն աշխատանքներին և այլն:

Նշված կազմակերպության կողմից նաև ընդգծվել է, որ մտահոգության տեղիք է տալիս այն, որ տարածքային ընտրական հանձնաժողովների կազմերը էական փոփոխության չեն ենթարկվել, ինչը խնդրահարույց է դարձնում վերջիններիս աշխատանքի անաչառությունը: Ընդ որում, շրջանցելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջները, առանձին տարածքային ընտրական հանձնաժողովներում ընդգրկված են եղել հանրային ծառայողներ, ինչը վարչական ռեսուրսների չարաշահման տեսանկյունից խնդրահարույց է դիտարկվել: Մտահոգության տեղիք է տվել նաև այն, որ ընդգրկված են եղել կուսակցականներ, նախկինում ընտրական իրավունքի խախտումների համար պատասխանատվության ենթարկված անձինք և այլն:

Թվարկված խախտումների համակարգային և հատուկ կազմակերպված բնույթը և մեծ ծավալը ինքնին բացառում է այդ խախտումների հետևանքները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովին վերապահված առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու միջոցով շտկելու հնարավորությունը: Պատահական չէ, որ հենց նման իրավիճակների և հենց նման հնարավորության բացակայության իրավիճակներում է, որ «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածը նախատեսում է առհասարակ ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու առանցքային գործիքակազմը:

Ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով ողջ ներկայացված փաստական և իրավական հանգամանքները, որոնք ուղղակիորեն վկայում են գործող մի շարք օրենքների ակնհայտ խախտումների մասին և որոնք կրել են կազմակերպված, զանգվածային, պարբերական ու համակարգված բնույթ՝ էապես ազդելով ինչպես առանձին տարածքներում քվեարկության, այնպես էլ ողջ ընտրական գործընթացի, ըստ այդմ էլ՝ ընտրությունների արդյունքների վրա, գտնում եմ, որ առկա են անհրաժեշտ և լիարժեք հիմքերը և փաստական ու իրավական հիմնավորումները՝ 2021 թվականի մայիսի 10-ին մեկնարկած արտահերթ խորհրդարանական ընտրությունների և հունիսի 20-ի քվեարկության օրը ավարտված՝ ընտրության արդյունքները անվավեր ճանաչելու համար:

Վերոգրյալի հիմքով ներկայացվում է պահանջ ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի 2-րդ մասով, որոշում ընդունել Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու մասին և նշանակել Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:

«Պատիվ ունեմ» դաշինքի ներկայացրած դիմումով նշվում է, որ.

Ղեկավարվելով ՀՀ Ընտրական օրենսգիրք ՀՀ սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 15-րդ մասով Ձեզ ենք դիմում 2021 թ. հունիսի 20-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու խնդրանքով: Գտնում ենք, որ ընտրության արդյունքները ենթակա են անվավեր ճանաչման՝ հիմք

ընդունելով 2021 թվականի մայիսի 10-ին Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների մեկնարկից մինչև հունիսի 20-ը ներառյալ ժամանակահատվածում տեղ գտած ընտրական իրավունքի այնպիսի հիմնարար խախտումները, որոնք խաթարում են Սահմանադրության 7-րդ հոդվածով նախատեսված հավասար, ազատ և գաղտնի քվեարկությամբ ընտրական իրավունքի առանցքային սկզբունքները: Մինչդեռ, ազատ ընտրությունները սահմանադրական կարգի հիմնարար սկզբունք հանդիսացող ժողովրդաիշխանության իրականացման առանցքային կառուցակարգն են և դրանց երաշխավորումը ցանկացած պետական մարմնի և, մասնավորապես, դրա համար հատուկ լիազորված՝ ԿԸՀ-ի սահմանադրական պարտականությունն է:

Ստորև ներկայացնում են սահմանադրական պահանջի էությունը ու սկզբունքները խաթարող էական խախտումների հիմնական, բայց ոչ սպառիչ շրջանակը, որոնք ինքին բավարար են արձանագրելու ընտրությունների արդյունքների անվավերությունը:

1. Մայիսի 10-ից սկսված արտահերթ խորհրդարանական ընտրություններում խաթարվել են հավասարության և օրինականության սկզբունքները, քանի որ ՀՀ վարչապետի կողմից, թեև ներկայացվել էր վարչապետի պաշտոնից հրաժարական, սակայն վերջինս շարունակել էր կատարել վարչապետին վերապահված լիազորությունները, այդ թվում՝ ընդունելով վարչապետի որոշումներ, նախագահելով կառավարության նիստերը և հրապարակելով կառավարության որոշումներ: Պետք է նկատել նաև, որ «հավասարության» սկզբունքը իրենից ենթադրում է արտահերթ խորհրդարանական ընտրություններին փաստացի հայտ ներկայացրած ուժերից և ոչ մեկի կողմից անհիրավաչափ առավելության բացառում, ինչը տվյալ դեպքում չի ապահովվել: Նշվածի լույսի ներքո էական է նաև, որ դեռևս 2021 թվականի մարտի 31-ին Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արսեն Թորոսյանը հրապարակավ հայտարարել էր, որ ««Իմ քայլի» նախընտրական շտաբը համակարգելու են չորս հոգի՝ ես, Ռոմանոս Պետրոսյանը, Արայիկ Հարությունյանը, Սուրեն Պապիկյանը: Պապիկյանը կլինի գլխավոր համակարգողը, կարելի է ասել՝ շտաբի պետը»: Նշվածը կրկին վկայում է արտահերթ խորհրդարանական ընտրությունների ընդհանուր գործընթացի մեջ վարչական միջամտության և ռեսուրսի չարաշահման մասին, քանի որ արտահերթ խորհրդարանական ընտրությունների գործընթացը ժամանակացույցի, նույնիսկ օրվա մասով միակողմանիորեն կազմակերպվել է իշխանության կողմից և մարտի 31-ին արդեն իսկ հայտարարվել էր շտաբի ձևավորման մասին՝ այն պայմաններում, երբ որևէ այլ ուժ չուներ հստակ տեղեկություն և/կամ երաշխիք արտահերթ ընտրություններ լինել-չլինելու, իսկ լինելու դեպքում՝ դրա օրվա մասին: Փաստացի բարձրաստիճան պաշտոններ զբաղեցնող անձինք մարտի 31-ից արդեն իսկ ձևավորել են նախընտրական շտաբ: Պետք է նկատել, որ նշվածն ընդհանուր ընտրական գործընթացի էական խախտում է, քանի որ համապատասխանում է «վարչական ռեսուրսի» չարաշահման միջազգային չափորոշիչներին: Այսպես, ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահմանն առնչվող՝ Վենետիկի հանձնաժողովի 2013թ. CDL-AD(2013)033 զեկույցում վարչական ռեսուրսը բնու-

թագրվում է որպես ընտրությունների ընթացքում գործող պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների՝ մարդկային, ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսները, հանրային զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ նրանց ունեցած վերահսկողության հանգամանքը, ինչպես նաև իրենց դիրքով պայմանավորված՝ հանրային օբյեկտների և ռեսուրսների նկատմամբ ունեցած հասանելիությունը, ինչը կարող է վերածվել քաղաքական կամ այլ բնույթի աջակցության:

2. Ընտրական գործընթացի շրջանակներում, այդ թվում՝ հենց քվեարկության օրը, իշխանության կողմից մշտապես օգտագործվել է վարչական ռեսուրս: Վարչական ռեսուրսի իրացումը իրականացվել է թե՛ ծառայողական գույքի և միջոցների օգտագործմամբ, թե՛ փաստացի գործադիր իշխանության կառուցվածքում գտնվող կառույցների միջոցով (ինչպես օրինակ՝ Ոստիկանության ծառայողների համակարգային և զանգվածային օգտագործում իշխող ուժի ցանկացած հանրային հավաքի ընթացքում՝ դրանով ապահովելով քաղաքական հակառակորդների նկատմամբ «սառեցնող ազդեցություն» (chilling effect), մարզպետարանների ռեսուրսի օգտագործում, Վարչապետի աշխատակազմի աշխատակիցների ներգրավվում և այլն): Պետք է նկատել, որ առկա են նաև փաստը արձանագրած տեսանյութեր, որտեղ դպրոցների, կրթական հաստատությունների ներկայացուցիչները իրենց պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով գործողություններ են կատարում հօգուտ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, այդ թվում՝ հանրային հավաքների մասնակցելու միջոցով: Պետք է նկատել նաև, որ հենց վարչական ռեսուրսի և ընտրական գործընթացի առանցքային սկզբունք հանդիսացող հավասարության երաշխիքը խախտվել է նաև հենց «լռության օրը»՝ 2021 թվականի հունիսի 19-ին: Մասնավորապես այդ պահին արձակուրդից վերադարձած վարչապետի պաշտոնակատար Նիկոլ Փաշինյանը, որը հանդիսանում է «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչապետի թեկնածու, կառավարական առանձնատնից, նշվածը հստակ ցուցադրելով, հրապարակավ ելույթ էր ունեցել՝ մի քանի անգամ կոչ անելով **«անպայման-անպայման» մասնակցել ընտրություններին**: Նշվածը հերթական անգամ վարչական ռեսուրսի օգտագործում էր: Գտնում ենք, որ նշված խախտումը ինքնին խաթարել էր ընտրական գործընթացի հավասարությունը, քանի որ, երբ նման ուղերձը կատարվում է կառավարական առանձնատնից՝ ի ցույց դնելով վարչապետի կարգավիճակը և ազդեցությունը, դրա հետևանքները, հավասարության սկզբունքի տեսակետից անդառնալի են դառնում: Այսինքն, նման վարքագծով «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացել է ապօրինի և հավասարությունը լրջորեն խախտող առավելություն՝ քվեարկության օրվանից ժամեր առաջ:

3. Ընտրական գործընթացը նաև իրականացվել է աննախադեպ ատելության խոսքի տարածմամբ՝ կրկին անդառնալի կերպով խախտելով ընտրական գործընթացի ընդհանուր սկզբունքները: Մասնավորապես, Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչապետի թեկնածու Նիկոլ Փաշինյանը նախընտրական քարոզչության ընթացքում տարբեր հանդիպումների ժամանակ ատելության և բռնության կոչերով է հանդես եկել.

- 08.06.2021 թվականին՝ «**Դրանց սաղին բռնելու եմ՝ շինեմ**» (2:38-2:44),
- 08.06.2021 թվականին՝ «**Ճակատից շարեմ կասեք բռնությունա**» (5:50-6:30),
-08.06.2021 թվականին՝ «**Հանկարծ չփորձեք թպրտալ**», «Փաշինյանը զգուշացրեց՝ ընտրություններից հետո լինելու է վենդետա, ջարդուփշուր» (3:46-3:57),
- 08.06.2021 թվականին՝ «**կարճ ասած՝ էդ համայնքների ղեկավարները ռադ են լինելու, վենդետա է լինելու**....» (1:19-1:25):
- 13.06.2021 թվականին՝ «Ընտրություններից հետո այ էս պողպատե մանդատով գալու ենք ձեր հետևից» (1:45-1:50),
- 14.06.2021 թվականին՝ «Ավշարի այս հրապարակում անձամբ ասֆալտին եմ պառկեցնելու» (0:38-0:41),
- 15.06.2021 թվականին՝ «**կկոտրենք, կկտրենք Սյունիքը մնացած Հայաստանին հակադրելու փորձ անող ամեն մի ձեռք**» (1:17-1:26):
- 15.06.2021 թվականին՝ «բոլորիդ լիազորում եմ տեղում **պողպատե մանդատավորել ստահակներին**» (0:50-0:59)...:

Նշվածի վերաբերյալ կրկին ՀՀ ԿԸՀ որևէ միջոց չէր ձեռնարկել՝ չնայած նման վարքագծով և նման ատելության խոսքի տարածմամբ փաստացի ուղղակի սպառնալիքների են ենթարկվել քաղաքական հակառակորդ հանդիսացող ուժերը: ՀՀ վարչական դատարանը 17.06.2021 թվականի ՎԴ/6861/05/21 վարչական գործով, որը հենց վերաբերում է ԿԸՀ-ի կողմից դրսևորած փաստացի անգործությանը՝ վճռով արձանագրեց, որ «Դատարանն արձանագրում է, որ ընտրություններին մասնակցող կուսակցության կամ թեկնածուի կողմից նախընտրական քարոզչության ընթացքում ցանկացած կոնտեքստով, անձնավորված կամ անորոշ թվով անձանց ուղղված, որոշակի կամ անորոշ ձևակերպմամբ վերը շարադրված մտքերը պարունակող արտահայտություններն օբյեկտիվորեն և **<u>ողջամտորեն կարող են ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիք, հետևաբար սույն վարչական գործով հայցվորի փաստարկներն առ այն, որ երրորդ անձ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից վերը նշված տեսաձայնագրություններում հնչեցված արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող էին ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիքներ, հիմնավոր են, ուստի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված գործիքակազմի կիրառման տեսանկյունից առաջադրված նախապայմանը՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումը, սույն դեպքում առկա է</u>**:»

Հաշվի առնելով այն մթնոլորտը, որում տեղի ունեցան ընտրությունները և այն քարոզչությունը, որ իրականացնում էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը՝ մուրճի ցուցադրում, ուղղակի սպառնալիքներ՝ *«փոենք ասֆալտին, ծեփենք պատերին»* և այլն, միայն այդքանը բավարար են, որ փաստվի, որ նման պարագայում չի կարելի ասել, թե ժողովուրդը կարողացել է իր կամքն ազատ արտահայտել: Իսկ ազատ արտահայտելու իրավունքը սահմանադրական պահանջ է,

և ժողովրդավարական ընտրության համար բնականաբար անհրաժեշտ է ազատ կամարտահայտումը:

4. Ընտրական գործընթացի ընթացքում մինչև 2021 թվականի հունիսի 10-ը հազարավոր անձինք, որոնք ստիպված տեղափոխվել էին ՀՀ մշտական բնակության և/կամ ունեին ՀՀ անձնագիր հնարավորություն չեն ունեցել մասնակցելու քվեարկությանը, քանի որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից առանց որևէ իրավաչափ հիմնավորման կամ պատճառաբանման որդեգրվել էր տարբերակված մոտեցում: Ըստ պատշաճ ձևով չհերքված պնդումների՝ նման հարցերով դիմումների բավարարումը կամ մերժումը որոշ դեպքերում պայմանավորված է եղել քաղաքական հայացքներով և ոչ թե որևէ իրավական հանգամանքով:

5. Ընտրությունների «հավասար» լինելու առանցքային տարրը խախտվել է նաև այն հանգամանքով, որ նախընտրական քարոզչության ընթացքում՝ եթերաժամի տրամադրումը անհիմն պատճառներով մերժելու միջոցով: Այսպես, «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ի գործադիր տնօրենի 2021 թ. հունիսի 12-ին Հ.Մ./02-164/21 գրությամբ մերժվել է «Պատիվ ունեմ» դաշինքի կողմից տրամադրված տեսահոլովակի հեռարձակումը այն պատճառաբանությամբ, որ տեսահոլովակում որոշ արտահայտություններ խնդրահարույց են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1-րդ հոդվածի տեսանկյունից: Հանրային հեռուստաընկերությունը, ցուցաբերելով խտրական վերաբերմունք, մի դեպքում հեռարձակում է Վիլեն Գայֆեջյանի կողմից հեղինակված տեսահոլովակը, որն ակնհայտորեն պարունակում է անձի պատիվը և արժանապատվությունը վիրավորող և զրպարտչական բնույթի տեղեկություններ, սակայն, մյուս դեպքում ՀՀ օրենսդրությամբ չունենալով նման լիազորություն՝ գրաքննության է ենթարկում և չի հրապարակում «Պատիվ ունեմ» դաշինքի տեսահոլովակը, որի ՀՀ օրենսդրության և ազատ խոսքին ներկայացվող միջազգային չափանիշներին համապատասխանությունը անգամ չնչին կասկածի չի ենթարկվում:

6. Ընտրությունների «ազատ» լինելու սկզբունքի երաշխավորման համար պարտադիր վավերապայման է ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողների տվյալների հասանելիությունը: Մինչդեռ ընտրություններին մասնակցել են հազարավոր անձինք, որոնց **<u>տվյալները պահվել են գաղտնի, քվեարկության վայրը պահվել է գաղտնի և հասանելի տեղեկատվություն առկա չի եղել</u>**: Ավելին՝ ընտրություններին հնարավոր խախտումների և կեղծիքների կանխարգելման համակարգերը (ինչպես օրինակ անձնագրի ընտրատարածքային տեղամասում հաշվառելը) առհասարակ առկա չի եղել հազարավոր անձանց դեպքում: Նշվածը ինքնին անհնարին է դարձրել այդպիսի կարգավիճակ ունեցող անձանց մասով պատշաճ հսկողական և վերահսկողական մեխանիզմների իրականացումը:

7. Մի շարք ընտրատեղամասերում ընտրողներին են տրամադրվել նախօրոք պատրաստված քվեաթերթիկների փաթեթներ, որի արդյունքում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ այդ փաթեթները չեն պարունակել բոլոր քվեաթերթիկները և դիտորդների նկատառումներից հետո միայն բացակայող քվեաթերթիկները համալրվել են և անդամները սկսել են քվեաթերթիկները հավաքել ընտրողի աչքի առջև:

8. Համացանցում հայտնված տեսանյութերը վկայում են զինված ուժերում ուղղորդված քվեարկության հնարավոր դեպքերի մասին, որոնք պետք է մանրակրկիտ ուսումնասիրության ենթակվեն: Ավելին, կասկած է առաջացնում սպաների կողմից ինչպես զորամասերում, այնպես էլ իրենց հաշվառման վայրի ընտրական տեղամասերում կրկնակի քվեարկություն կատարելու հանգամանքը: Ընդ որում, նշված դեպքերով արդեն իսկ հարուցվել են քրեական գործեր:

9. 20/07 ընտրական տեղամասում «Թրանսփարենսի ինթերնեշնլ» կազմակերպության վստահորդը «Քաղաքացիական պայմանագիր» և «Հանրապետություն» կուսակցությունների վստահված անձանց հետ միասին ընտրատեղամասից դուրս դիմավորում էին ընտրողներին և ուղեկցում էին ընտրատեղամաս:

10. 4/48 ընտրական տեղամասում երկար ժամանակ առանց, որևէ իրավական հիմքի գտնվել են Արաբկիր համայնքի փոխթաղապետ Բալասանյան Դավիթը և Արաբկիր համայնքի թաղապետարանի իրավաբանական վարչության պետ Կարապետյան Գեղամը և առանձին զրույց են ունեցել տվյալ ընտրական տեղամասի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ներկայացուցչի հետ: Վերջիններս ընտրական տեղամասում իրենց ներկայությունը բացատրում էին, որ ստացել են ահազանգ, իբր ընտրական տեղամասի կահավորման հետ առկա են խնդիրներ:

11. 4/49 ընտրական տեղամասում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձ Մերի Հակոբի Սարգսյանը բակում ուղորդել է քաղաքացիներին:

12. Քվեարկության օրվա դրությամբ արձանագրվել էին մի շարք խախտումներ, այդ թվում «Պատիվ ունեմ» դաշինքի վստահված անձանց և պատգամավորի թեկնածուների, դիտորդների և ԶԼՄ-ների կողմից: Մի շարք ընտրական տեղամասերում ձայների հաշվարկի ժամանակ տեղի էին ունեցել հոսանքազրկումներ, որոնք արդեն իսկ կասկածի տակ էին դրել ընտրական տեղամասերում քվեարկությունը, այդ թվում՝ մի շարք հնարավոր ապօրինությունների և ընտրական կեղծիքների կազմակերպման տեսանկյունից: Խիստ կասկածելի է նաև ընտրական տեղամասերի արձանագրությունների և ԿԸՀ-ի կողմից հրապարակված արդյունքների մեջ առկա մեծ ծավալի անճշտությունները, որոնք ի հայտ եկան ԿԸՀ-ի կողմից հայտարարված վերահաշվարկի արդյունքներով:

Թվարկված խախտումների համակարգային և հատուկ կազմակերպված բնույթը և նման ծավալը ինքնին բացառում է առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու միջոցով խախտումների հետևանքները վերացնելու հնարավորությունը: Նման իրավիճակներում «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածը նախատեսում է առհասարակ ընտրությունների արդյունքները անվավեր ճանաչելու առանցքային հնարավորությունը:

Ղեկավարվելով «Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով ողջ ներկայացված փաստական և

իրավական հանգամանքները, որոնք ուղղակիորեն վկայում են գործող մի շարք օրենքների ակնհայտ խախտումների մասին և որոնք կրել են կազմակերպված, զանգվածային, պարբերական ու համակարգված բնույթ՝ էապես ազդելով ինչպես առանձին տեղամասերում քվեարկության, այնպես էլ ողջ ընտրական գործընթացի, ընտրությունների արդյունքի վրա՝ գտնում ենք, որ առկա են անհրաժեշտ հիմքերը և հիմնավորումները 2021 թվականի մայիսի 10-ին մեկնարկած արտահերթ խորհրդարանական ընտրությունների և հունիսի 20-ի քվեարկության օրը ավարտված՝ ընտրության արդյունքները անվավեր ճանաչելու համար:

Նիստին ներկայացած «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության լիազոր ներկայացուցիչ Վահագն Հովակիմյանն իր գրավոր բացատրություններով նշեց.

«Սույն թվականի հունիսի 25-ին «Հայաստան» դաշինքի լիազոր ներկայացուցիչ Արամ Վարդևանյանի **(այսուհետ՝ Դիմող)** կողմից ներկայացված՝ 2021 թվականի հունիսի 20-ին կայացած ՀՀ Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և վերաքվեարկություն նշանակելու վերաբերյալ դիմումում **(այսուհետ՝ Դիմում)** տեղ գտած փաստարկներին, անհրաժեշտ ենք համարում արձանագրել, որ ներկայացված դիրքորոշումը և փաստարկները անհիմն են, բացարձակ չեն պարունակում ՀՀ Ընտրական օրենսգրքով ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու և վերաքվեարկություն նշանակելու համար սահմանված հիմքեր:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ 2021թ հունիսի 20-ին կայացած ընտրությունների արդյունքներն ամփոփող որոշումն ուղղակի ազդեցություն կարող է ունենալ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության իրավունքների և օրինական շահերի վրա և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 2-րդ մասով՝ խնդրում ենք «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությանը ներգրավել դիմումի քննությանը և հիմք ընդունել ներկայացված դիրքորոշումը:

ՀՀ ընտրական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի **այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա**, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:

Այսինքն, վերաքվեարկություն նշանակելու, իսկ եթե վերաքվեարկությամբ հնարավոր չէ շտկել խախտումները, ապա անվավեր ճանաչելու մասին որոշում ընդունելու նախապայման է հանդիսանում այնպիսի խախտումների մասին տվյալները, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը, հիմք ընդունելով

քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, դատարանի վճիռները, հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքով ընդունած որոշումները, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, քվեարկության արդյունքների վերաբերյալ ընդունած որոշումները, ամփոփում է ընտրության արդյունքները և ընդունում որոշում ընտրությունների արդյունքների վերաբերյալ:

Հարկ է նկատել, որ անվավեր ճանաչման և վերաքվեարկության պահանջ նեկայացրած սուբյեկտները, չեն բողոքարկել տեղամասային ընտրական հանձնաժողովների կողմից կայացված որոշումները, վերջիններիս վստահված անձինք չեն ունեցել հատուկ կարծիք ընտրության արդյունքների մասին, ինչը ևս մեկ անգամ վկայում է այն մասին, որ ներկայացված դիմումները առարկայազուրկ են:

Դիմողի կողմից ներկայացրած առանձին փաստարկների վերաբերյալ անհրաժեշտ ենք համարում ներկայացնել հետևյալը.

1) Անդրադառնալով Դիմողի առաջին փաստարկին՝ հարկ ենք համարում նախևառաջ արձանագրել, որ այն զուրկ է իրավական հիմքերից, փաստարկված չէ, վերացական է և որևէ կերպ ներկայացված չէ դրա կապը ընտրությունների արդյունքների անվավերության պահանջի հետ:

Այդուհանդերձ՝ Հանձնաժողովի դիրքորոշման ձևավորման տեսանկյունից կարևորելով փաստարկի վերաբերյալ հակափաստարկների ներկայացումը՝ հայտնում ենք, որ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների անցկացումը քննարկվել է քաղաքական կոնսենսուսի հասնելու և քաղաքական ճգնաժամը հաղթահարելու տրամաբանությամբ:

Ավելի քան ակնհայտ է նաև, որ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու յուրաքանչյուր ենթադրյալ հիմքի գնահատումն անհրաժեշտ է իրականացնել դրա՝ ընտրությունների արդյունքների վրա հնարավոր ազդեցության տեսանկյունից:

Միաժամանակ հարկ ենք համարում Հանձնաժողովի ուշադրությունը հրավիրել այն փաստին, որ առաջին հիմքի ուսումնասիրության արդյունքում անհայտ է մնում, թե ինչ խախտում, ինչ հակահիրավական արարքի կատարում է վերագրվում Նիկոլ Փաշինյանին և վերջիվերջո ինչ պատճառահետևանքային կապ է առկա ընտրությունների արդյունքների և ներկայացված փաստերի միջև:

2) Երկրորդ հիմքի շրջանակներում Դիմողն անդրադառնում է նաև վարչապետի պաշտոնակատարի կողմից Ազգային ժողովի ամբիոնից ունեցած ելույթներին, ինչպես նաև նշում, որ ըստ էության մինչև նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկը քարոզչություն է իրականացվել: Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ խորհրդարանական քննարկումների ընդհանուր պրակտիկան չի բացառում օրակարգային հարցերի քննարկման ժամանակ միաժամանակ անդրադառնալ նաև կոնկրետ ժամանակահատվածում պետության տարբեր ոլորտների էական հարցերի վերաբերյալ խնդիրների և դրանց լուծման

ուղղությունների վերաբերյալ տեսակետների բարձրաձայնումը: «ՀՀ կառավարության ծրագրի 2020թ կատարմանը ընթացքի և արդյունքների մասին զեկույցի (https://www.gov.am/files/docs/4520.pdf) առաջին բաժինը նվիրված էր Արցախյան 44-օրյա պատերազմի և դրա հետևանքների վերացման ուղղությամբ կառավարության կողմից իրականացված գործողությունների նկարագրությանը՝ դրանք կապելով հաջորդիվ անելիքների հետ: Նույն տրամաբանությամբ զեկույցի 2-րդ բաժինը նվիրված էր Կորոնավիրուսի նոր համաճարակի դեմ պայքարին միտված կառավարության գործողությունների հաշվետվությանը: Տրամաբանական է, որ պատերազմի ընթացքի, դրա հետևանքների վերացման, ինչպես նաև համավարակի դեմ պայքարի կառավարության գործողությունները, որպես խորհրդարանական և հանրային հաշվետվողականության սկզբունքի պահպանում, պետք է ներկայացվեին Ազգային ժողովին՝ չնայած կառավարության ծրագրում դրանց մասին կանխատեսման իսկ բացակայության փաստին: Դիմողի տրամաբանությամբ ստացվում է, որ 2020թ ընթացքում երկու հսկայական մարտահրավերների դիմակայման ու հաղթահարման ուղղությամբ արված աշխատանքների հաշվետվությունը պետք է ստորադասվեր 2019թ. կառավարության ծրագրով նախատեսված միջոցառումների ուղղությամբ կատարվածի ներկայացմանը, ինչն, իրականում, չի կարող այդպես լինել: Հետևաբար, Դիմողի կողմից վկայակոչված ելույթն ինքնին չի կարող հանդիսանալ վարչապետի պաշտոնակատարի կողմից որևէ հակահիրավական արարք, առավել ևս նշվածը չի կարող հանդիսանալ ընտրության արդյունքների վրա ազդող խախտում:

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից նշված այն պնդմանը, որ մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը տեղի են ունեցել փաստացի քարոզչական գործողություններ, ապա անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ պարբերության համաձայն՝ *«[ն]ախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:»*: Հետևաբար, անգամ եթե մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը տեղի են ունեցել իրենց բնույթով և բովանդակությամբ քարոզչական գործողություններ, ապա դրանք ոչ մի կերպ չեն կատարվել ընտրակարգը սահմանող օրենսդրությամբ արգելված ժամանակահատվածում:

Ընդ որում, նախորդ կետի շրջանակներում ներկայացված դիրքորոշման լույսի ներքո հարկ է արձանագրել, որ բացակայում է ընտրությունների արդյունքների և ներկայացված տեղեկատվական բնույթ կրող երկրորդ հիմքի միջև պատճառահետևանքային կապը հիմնավորող որևէ փաստարկ: Ի լրումն՝ հարկ ենք համարում ընդգծել որ Կառավարության 2020 թվականի ծրագրի կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցի ներկայացման ընթացքում որևէ սուբյեկտի ելույթի բովանդակությունը դուրս է Հանձնաժողովի կողմից քննության ենթակա հանգամանքների շրջանակից:

Ավելին՝ այս հիմքի շրջանակներում հարկ է Հանձնաժողովի ուշադրությանը հրավիրել այն հանգամանքը, որ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով, իրավասու է կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով, ուստի յուրաքանչյուր կատարված գործողության վերաբերյալ իրավական գնահատականներ տալիս ևս վերջինս պետք է ղեկավարվի նման գործողության կատարումը կանոնակարգող իրավական ակտերով: Վերոգրյալի մատնանշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ Դիմումի քննությունն ըստ էության պետք է կատարվի ընտրական գործընթացները կարգավորող իրավական ակտերի հիման վրա, և կամայական փաստարկները, որոնք չեն կարող վերագրվել ընտրական գործընթացին, դուրս են Հանձնաժողովի կողմից ուսումնասիրման ենթակա հարցերի շրջանակից:

3) Հաջորդ հիմքը վերաբերում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2021 թվականի ապրիլի 1-ին ընդունված «ՀՀ ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի ընդունման գործընթացին: **Նախ՝ հարկ է ընդգծել, որ նշված իրավական ակտն ընդունվել և ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ նախատեսված հստակ ընթացակարգերի պահպանմամբ, ուստի, ցանկացած առանձին հանգամանքի շահարկում այս գործընթացի վերաբերյալ ոչ մի դեպքում չի կարող համարվել նշված օրենքի լեգիտիմությունը կասկածի տակ դնող:**

4) Հաջորդ հիմքի շրջանակներում Դիմումատուն ներկայացնում է երկու փաստարկ.

- Դիմումատուի կողմից ՀՀ վարչական դատարանում վիճարկվում է ՀՀ կառավարության որոշում, որը թիվ ՎԴ/5525/05/21 վարչական գործի շրջանակներում ընդունվել է վարույթ: **Ընդ որում սույն փաստարկի շրջանակներում Դիմումատուն հայտնել է, որ հայցադիմումը վարույթ ընդունված լինելու փաստով նշված հարցի առերևույթ խնդրահարույց լինելու առկայության իրավական շեմը առնվազն հաղթահարվել է:**

- Որպես հավասարության սկզբունքի խախտում մատնանշվել է այն հանգամանքը, որ փաստացի բարձր պաշտոններ զբաղեցնող անձինք մարտի 31-ից արդեն իսկ ձևավորել են նախընտրական շտաբ: Սույն պնդումը Դիմումատուն հիմնավորում է նրանով, որ Արսեն Թորոսյանը հայտարարել է, որ նախընտրական շտաբը **համակարգելու են չորս հոգի** (...):

Առաջին պնդման վերաբերյալ հարկ ենք համարում նախևառաջ ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը հստակ կանոնակարգում է հայցադիմումի վարույթ ընդունելու փուլը, մասնավորապես արձանագրելով, թե որ դեպքերում է հայցադիմումը ենթակա վարույթ ընդունման: Չմանրամասնելով վարչադատավարական գործընթացում հայցադիմումի վարույթ ընդունման փուլում

ներկայացման և ուսումնասիրման ենթակա փաստերի շրջանակը՝ հարկ է համարում պարզապես արձանագրել, որ Դիմողի կողմից վկայակոչված վարչական գործով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը 2021 թվականի հունիսի 3-ին հայցադիմումը վարույթ ընդունելու որոշմամբ արձանագրել է, որ դիմումը ներկայացվել է Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի **73-րդ, 74-րդ, 194-րդ հոդվածներով նախատեսված պահանջներին համապատասխան,** ուստի, Դատարանը գտնում է, որ դիմումը պետք է ընդունել վարույթ (...): Այսինքն վարչական դատարանի կողմից նշված հայցը վարույթ ընդունելը չի կարող դիտարկվել, որպես այն փաստի ապացույց, որ «հարցի առերևույթ խնդրահարույց լինելու առկայության իրավական շեմը առնվազն հաղթահարվել է», քանի որ վարչական դատարանի կողմից հայցը վարույթ ընդունելու փուլում առհասարակ չի գնահատվում դրանով բարձրացվող հարցի առերևույթ խնդրահարույց լինելը:

Հաջորդ պնդման վերաբերյալ հարկ է միայն նշել, որ Արսեն Թորոսյանի կողմից հնչեցված արտահայտությունից որևէ կերպ հնարավոր չէ եզրահանգել, որ առկա է ձևավորված նախընտրական շտաբ: Ավելին՝ հենց հայտարարության մեջբերված հատվածի քերականական ուսումնասիրությունն ինքնին փաստում է, որ որոշակի գործողությունը դեռևս **կատարվելու է** (կիրառված է ապակատար դերբայ, որից բնավ հնարավոր չէ եզրահանգել, որ վկայակոչված գործողությունն արդեն իսկ կատարվել ավարտվել է):

Ինչ վերաբերում է «Ժողովրդավարություն իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի 2013 թվականի CDL-AD(2013)033 զեկույցին, հարկ ենք համարում արձանագրել, որ մեջբերված հատվածում վկայակոչված եզրակացության որևէ հատված վերաբերելի չէ խնդրո առարկա դեպքին: Ավելին՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2012 թվականի մայիսի 31-ի թիվ ՍԴՈ-1028 որոշմամբ արձանագրել է, որ պետական տարբեր պաշտոնյաների՝ նախընտրական քարոզչությանը մասնակցելու վերաբերյալ **սահմանափակումները նախատեսված են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով**: Ընդ որում սահմանադրական դատարանն արձանագրել է, որ առկա ընտրակարգի պայմաններում խնդիրը չպետք է լուծվի քաղաքական պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից նախընտրական քարոզչության իրականացումն արգելելով:

5) Հաջորդ հիմքի շրջանակներում Դիմողը բովանդակային առումով ներկայացրել է իրավական ակտի ոչ իրավաչափ լինելու հիմնավորումներ, մասնավորապես նշելով, որ Էջմիածին համայնքի ղեկավար Դիանա Գասպարյանը, վարչական որոշումներ կայացնելիս, խուսափել է որևէ անհրաժեշտ հիմնավորում ներկայացնելու օրենսդրական պահանջից (...) ինչը հանգեցրել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 8-րդ հոդվածի խաթարման (...):

Հարկ չհամարելով հավելյալ ծանրաբեռնել սույն դիրքորոշումը՝ հարկ ենք համարում պարզապես ընդգծել, որ **Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասով, իրավասու է կատարելու միայն**

այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված է Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում համայնքի ղեկավարների կողմից կայացվող որոշումների, կատարվող գործողությունների և դրսևորվող անգործության վիճարկման կառուցակարգերի ուսումնասիրությունից կարելի է եզրահանգել, որ նման հիմքի վկայակոչումը սույն վարույթի **շրջանակներում առարկայազուրկ է և առհասարակ ենթակա չէ քննության:**

6) Անդրադառնալով Դիմողի կողմից նշված՝ վարչական ռեսուրսների օգտագործման վերաբերյալ դիտարկումներին՝ անհրաժեշտ է նշել, որ նման հայտարարությունները հիմնավորող ապացույցներ չեն ներկայացվել, ընդ որում, հատկապես ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ նախորդիվ բազմաթիվ անգամներ հնչած նույն բնույթի մեղադրանքներն այդպես էլ ոչ մի առանձին դեպքում չեն հաստատվել: Դիմողի կողմից իր այլ պնդումները հիմնավորող և վերացականորեն վկայակոչված տեսանյութերը չեն ներկայացվում, ինչն, ըստ էության, զրկում է դրանց պատշաճ արձագանքելու և հակադարձելու հնարավորությունից:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը 2017 թվականի ապրիլի 28-ի թիվ ՍԴՈ-1364 որոշմամբ արձանագրել է.

«Սույն գործով դատաքննության շրջանակներում ընդհանրացնելով անդրադարձը դիմողի կողմից ներկայացված փաստարկներին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումին կից ներկայացված փաստարկները, գրեթե առանց բացառության, վերցված են զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից և «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտարկումների արդյունքներից: Դատաքննության ընթացքում հավելյալ ներկայացվեցին նաև հասարակական այլ կազմակերպությունների դիտարկումներ: «Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «**Փաստերի վերաբերյալ կողմերի բացատրություններում ներկայացվող տեղեկությունները ապացուցողական նշանակություն չունեն**»: **Դրանք պետք է <u>օրենքով նախատեսված իրավական գործընթացի արդյունքում ձեռք բերեն նման նշանակություն</u>**:

Չմանրամասնելով ներկայացված դիմումի շրջանակներում վկայակոչված փաստերի վերաբերյալ սույն գործով երրորդ անձի դիրքորոշումը՝ հարկ ենք համարում պարզապես արձանագրել, որ **վերացական, ենթադրյալ և որևէ ապացույցով չհաստատված պնդումները** չեն կարող դրվել որևէ որոշման հիմքում:

Այսպիսով, այն պայմաններում, երբ Դիմողը վարչական ռեսուրսի կիրառման վերաբերյալ ներկայացրել է բացառապես տեղեկատվական բնույթ կրող, որևէ ապացույցով չհաստատված փաստարկներ՝ հարկ է արձանագրել, որ տվյալ վարույթում շահագրգռվածություն ունեցող սուբյեկտը զրկվում է փաստարկված դիրքորոշում ներկայացնելու հնարավորությունից:

Ինչ վերաբերում է «լռության օրվա» խախտման վերաբերյալ Դիմողի փաստարկին, հարկ ենք համարում արձանագրել, որ ՀՀ վարչական դատարանը թիվ ՎԴ/7067/05/21 վարչական գործի շրջանակներում անդրադառնալով Դիմողի կողմից

վկայակոչված ելույթի արդյունքում կիրառված վարչական պատասխանատվության իրավաչափությանը, արձանագրել է.

*«Դատարանը, նշված հոդվածով սահմանված կանոններին համապատասխան մեկնաբանելով Օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությունը և դրանում օգտագործված «քարոզչություն» եզրույթը, գտնում է, որ **Օրենսգրքի իմաստով քարոզչություն կարող է համարվել ցանկացած այն գործողությունը, որի միջոցով, ի թիվս այլոց, գլխավորապես ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուները համոզում են ընտրողներին քվեարկելու իրենց կամ իրենց քաղաքական ուժի օգտին կամ չքվեարկելու իրենց հակառակորդ քաղաքական ուժի կամ թեկնածուի օգտին:***

(...)

*Տվյալ դեպքում Դատարանը, ուսումնասիրելով վարչական վարույթի նյութերում առկա՝ լազերային կրիչով ներկայացված տեսանյութը, արձանագրում է, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված (1-ին համար) պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի ելույթում բացակայում են իր կամ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության օգտին քվեարկելուն կամ այլ թեկնածուի և/կամ կուսակցության (կուսակցության դաշինքի) օգտին չքվեարկելուն ուղղված՝ ուղղակի կամ անուղղակի կոչեր, հետևաբար, նաև այն հաշվառմամբ, որ վերջինս տվյալ օրվա դրությամբ հանդիսացել է վարչապետի պաշտոնակատար, իսկ հայցվորի պնդմամբ նրա՝ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածը 18.06.2021թ. ավարտվել է (նշված փաստը պատասխանողը չի վիճարկել), ինչպես նաև ընտրություններին հասարակության մասնակցության կարևորությունն ու նշանակությունը, **Դատարանը գտնում է, որ քննարկվող դեպքում խնդրո առարկա հրապարակային ելույթը ողջամտորեն չի կարող համարվել այնպիսի գործողություն, որը նպատակ է հետապնդում ուղղորդելու ընտրողներին քվեարկելու կամ չքվեարկելու ընտրություններին մասնակցող այս կամ այն թեկնածուի կամ կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին և, <u>ըստ դրա՝ չի կարող որակվել որպես քարոզչություն</u>:»:***

Նկատի ունենալով, որ տվյալ պարագայում առկա է բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ, որում փաստորեն գնահատման է ենթարկվել Դիմողի կողմից վկայակոչված ելույթը՝ հարկ ենք համարում պարզապես արձանագրել, որ այն ամբողջությամբ արտահայտում է սույն գործով երրորդ անձի դիրքորոշումը բարձրացված հարցի առնչությամբ:

Անդրադառնալով Դիմողի կողմից սույն հիմքի շրջանակներում բարձրացված հաջորդ փաստարկին, որի շրջանակներում դիմողը վկայակոչում է Արմեն Չարչյանի նկատմամբ քրեական հետապնդման հարուցվելու փաստը և գնում, որ առկա է երկակի չափանիշների կիրառում՝ հարկ ենք համարում արձանագրել հետևյալը:

Հակահիրավական արարքներն առհասարակ իրենց հանրային վտանգավորությամբ պայմանավորված ենթակա են տարբեր իրավական

գնահատականների: Այս համատեքստում հարկ է արձանագրել, որ անհիմն է Դիմողի դիրքորոշումն առ այն, որ առկա է երկակի ստանդարտների կիրառման խնդիր, նախ այն հիմնավորմամբ, որ բողոքարկման ոչ ենթակա դատական ակտով արձանագրվել է Նիկոլ Փաշինյանի կողմից ելույթի շրջանակներում արտահայտված մտքերի՝ նախընտրական քարոզչություն չհանդիսանալը: Համեմատության մեջ դիտարկված արարքների նույնաբնույթ հանդիսանալու վերաբերյալ Դիմողի պնդումն առարկայազուրկ է: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ տարածված տեղեկատվության համաձայն Արմեն Չարչյանի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում՝ հարկ ենք համարում նախևառաջ արձանագրել, որ անմեղության կանխավարկածից ելնելով սույն դիրքորոշման շրջանակներում տարածված ձայնագրությանը գնահատականներ չեն տրվում: Միաժամանակ, հարկ ենք համարում ընդգծել, որ այն պայմաններում երբ առկա է հարուցված քրեական գործ ենթադրվում է, որ արարքին տրվել է քրեաիրավական որակում, ուստի, վարչական վարույթի շրջանակներում գնահատման ենթարկված փաստերը (Նիկոլ Փաշինյանի ելույթը) չեն կարող համեմատության մեջ գտնվել քրեաիրավական որակման արժանացած արարքի հետ:

7) Դիմողի կողմից հաջորդ պնդման շրջանակներում ներկայացվում է այն հանգամանքը, որ նախընտրական քարոզչության ընթացքում հնչեցվել է ատելության խոսք: Դիմողի կողմից մեջբերվել են որոշ ելույթներից հատվածներ և դրա արդյունքում փորձ է արվել հիմնավորել, որ դրանք սպառնալիքներ են ուղղված քաղաքական հակառակորդներին:

Սույն դիրքորոշումը ավելորդ չծանրաբեռնելու համար հղումով ներկայացնում ենք տեսանյութերի այն հատվածները, որոնք դիտավորությամբ կամ առնվազն կոպիտ անփութությամբ չեն մեջբերվել Դիմողի կողմից և որոնց համատեքստում վերոնշյալ ասվածների դիտարկման դեպքում պարզ է դառնում, որ նշված արտահայտությունները ոչ մի կերպ չեն կարող որակվել, որպես հոգեբանական, ֆիզիկական, կրոնական հարկադրանքի մեթոդներ, բռնության կոչեր, բռնության կիրառման սպառնալիքներ:

Այսպես օրինակ այն նույն ելույթի ժամանակ, որի ընթացքում Նիկոլ Փաշինյանը ասել է. «*Հանկարծ չփորձեք թպրտալ*», ասել է նաև, որ իր խոսքերը կոնտեքստից պետք չէ կտրել և **խոսքը չի գնում ֆիզիկական հաշվեհարդարների մասին:**[1]

Ավելին, ելույթների ամբողջական ուսումնասիրության արդյունքում կարելի է հանգել միայն այն եզրակացության, որ Հայցվորի կողմից վկայակոչված սուր քաղաքական արտահայտությունները հասցեագրված են եղել բացառապես այն մարդկանց, որոնք փորձ կկատարեն ապօրինի ազդեցություն ունենալ ընտրողների կամքի վրա, այսինքն կծավալեն ապօրինի գործունեություն:[2] Բացի այդ, բազմիցս հնչում է, որ բոլոր կատարվելիք գործողությունները նախատեսվում է կատարել օրենքի

[1] https://youtu.be/xQUBp6m_vCc?t=61, https://youtu.be/xQUBp6m_vCc?t=194
[2] https://youtu.be/9fxg9YmToAA?t=75

և իրավունքի շրջանակներում բացառապես[3]: Մինչդեռ Դիմողի կողմից նշվում է, որ վկայակոչված արտահայտություններն ուղղված են քաղաքական հակառակորդներին, այն դեպքում, երբ Նիկոլ Փաշինյանի ելույթներից միանգամայն հստակ է, որ խոսքն ուղղված է օրինակ այն անձանց, ովքեր կպարտադրեն ընտրողներին իրենց կամքը:

Նշվածի համատեքստում առնվազն անհասկանալի է՝ ինչու են Դիմողի կողմից քաղաքական հակառակորդներին ուղղված համարվում այն արտահայտությունները, որոնք ուղղակիորեն հղվում են օրինախախտներին:

Բնական է նաև, որ նախընտրական պայքարը ենթադրում է սուր քաղաքականա բանավեճ և խոսքի ազատության լայն շրջանակներ:

8) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունից տեղեկատվության հարցման արդյունքում ստացված տեղեկությունների համաձայն՝ ընտրական հանցագործությունների առնչությամբ 2021 թվականի մայիսի 10-ին մինչև հունիսի 20-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության ոստիկանության կամ Ազգային անվտանգության ծառայության կողմից բերման են ենթարկվել 140 անձինք, որոնցից 13-ը հանդիսացել են «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչներ կամ նույն դաշինքի նախընտրական գործունեության մեջ ներգրավված անձինք, որոնցից մեկը ձերբակալվել է և հետագայում կալանավորվել:

Ընդգծելով այն հանգամանքը, որ իրավապահ մարմինների կողմից համապատասխան դատավարական գործողությունները և անհրաժեշտության դեպքում դատավարական հարկադրանքի միջոցները կիրառվել են հանցագործությունների դեպքերի առթիվ, միևնույն ժամանակ հարկ ենք համարում արձանագրել, որ ստացված տեղեկություններից հետևում է, որ իրավապահ մարմինների գործունեության արդյունքում արգելանքի վերցված անձանց ընդհանուր թիվը չի կարող լինել այնպիսին, որի արդյունքում քաղաքական ուժերը չէին կարողանա իրականացնել իրենց նախընտրական գործունեությունը կամ էլ դա հետագայում կազդեր ընտրությունների արդյունքների վրա: Ավելին, ընտրական հանցագորոծություններին պատշաճ արձագանքումը որևէ կերպ չի կերպ չի կարող ընկալվել որպես բացասական երևույթ, այլ ընդհակառակը ընտրությունների պատշաճ անցկացման բաղադրատարր է:

9) Ընդունելի չի կարող համարվել Դիմողի այն պնդումը, համաձայն որի «Հայաստանի» դաշինքի նախընտրական պաստառների վնասման ու ոչնչացման դեպքերում ուղղակիորեն նշվում է և հաստատված է համարվում այն հանգամանքը, որ նկարագրված գործողություններում ուղղակի կամ անուղղակի ներգրավված են եղել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հետ առնչություն ունեցող անձինք: Ինչպես նշում է Դիմողը, նշված հանգամանքների վերաբերյալ պատշաճ իրավական գնահատականներ կարող են տրվել միայն համապատասխան քրեադատավարական գործընթացների շրջանակներում, որոնք, Դիմողի հավաստմամբ, արդեն իսկ ընթացքի մեջ են:

[3] https://youtu.be/9fxg9YmToAA?t=46

Այս մասում ևս հատկապես կարևորվում է ՀՀ սահմանադրական դատարանի **28.04.2017 թվականի թիվ ՍԴՈ-1364 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը:**

10) Դիմողի կողմից միայն ընդհանրական պնդմամբ չի ներկայացվում որևէ հիմնավորում, որի արդյունքում կփաստվի, որ քվեարկության օրվա նկարագրված գործողությունները հանգեցրել են «Հայաստան» դաշինքի վարկանիշի և ընտրողների կողմնորոշման վրա:

11) «Հայաստան» դաշինքի անդամի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման վերաբերյալ դիրքորոշում չի կարող ներկայացվել հաշվի առնելով այն հանգամանքը, որ կոնկրետ քրեական գործի վերաբերյալ հանգամանքները հրապարակայնորեն հայտնի չեն:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության Հարկադիր կատարումն ապահով ծառայության աշխատակցի՝ աշխատանքից հեռացման դեպքի մասին հիշատակմանը, ապա անհրաժեշտ ենք համարում վկայակոչել դեռևս 2021 թվականի հունիսի 15-ին Արդարադատության նախարարության կողմից տարածված հաղորդագրությանը, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր հարկադիր կատարողի պաշտոնակատարի կողմից 2021 թվականի հունիսի 15-ին նշանակվել է ծառայողական քննություն՝ պաշտոնեական դիրքը կուսակցության շահերի համար օգտագործելու ենթադրյալ արարքի կապակցությամբ:[4]

12) Բարձրացված հարցի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը պաշտոնական հաղորդագրություն էր տարածել դեռևս 2021 թվականի հունիսի 17-ին և նշել, որ իրենց ներկայացված դիմումների արդյունքում որոշումները կայացվել են անհատական սկզբունքով:[5] Այդուհանդերձ, անհասկանալի է նաև Դիմողի արված հետևությունը՝ դիմումները մերժելը դիմումատուների քաղաքական հայացքներով պայմանավորելով, քանզի ակնհայտ է, որ դիմողների քաղաքական հայացքներն ի սկզբանե ոչ մի կերպ չէին կարող հայտնի լինել ոստիկանությանը, իսկ Անձնագրային և վիզաների վարչության ծառայողներն էլ նման բնույթի տեղեկությունների չեն տիրապետում:

13) Հասկանալի չէ, թե կոնկրետ ինչպիսի արգելքի մասին է վկայակոչում Դիմողը նշված կետում, այդուհանդերձ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ ընտրողը քվեարկության կարող էր մասնակցել նույնականացման քարտով, կենսաչափական անձնագրով կամ անձնագրով՝ առանց որևէ սահմանափակումների:

14) Արտահերթ խորհրդարանական ընտրությունների մասնակից քաղաքական ուժերի նկատմամբ նախընտրական քարոզչության ընթացքում գրաքննություն իրականացնելու հարցի վերաբերյալ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ից ստացված տեղեկության համաձայն՝ *«Հանրայինը*

---

[4] «Ծառայողական քննություն՝ հարկադիր կատարողի կողմից պաշտոնական դիրքը կուսակցության շահերի համար օգտագործելու ենթադրյալ արարքի կապակցությամբ», հրապարակված՝ 15 հունիսի 2021թ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, հասանելի՝ այստեղ:

[5] «ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ», հրապարակված՝ 17 հունիսի 2021թ, Հայաստանի Հանրապետության ոստիկանություն, հասանելի՝ այստեղ:

նախընտրական քարոզչության շրջանում առաջնորդվել է երրորդ կողմի իրավունքների առերևույթ խախտումը կանխելու սկզբունքով և օրենսդրական վիճելի կարգավորումների պայմաններում կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների հետ համագործակցությամբ ձեռնպահ է մնացել իրավական տեսանկյունից խնդրահարույց դրվագների ցուցադրությունից: Ս.թ. հունիսի 13-ին «Պատիվ ունեմ» դաշինքը հրաժարվեց շտկումներ մտցնել իր հոլովակներից մեկում: Օրենքի տարբեր մեկնաբանությունների պայմաններում, հաշվի առնելով ԿԸՀ և ՀՌՀ խորհրդատվությունը՝ Հանրայինը որոշում կայացրեց ամբողջությամբ հեռարձակել կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացվող հոլովակները՝ չուսումնասիրելով դրանցում առկա հնարավոր իրավական ռիսկերը: ԿԸՀ-ի հետ խորհրդակցությունների արդյունքում, որպես «Պատիվ ունեմ» դաշինքի մերժված հոլովակի փոխհատուցում՝ Առաջին ալիքը քաղաքական ուժին տվեց չհեռարձակված հոլովակին համարժեք հավելյալ եթերաժամանակ»:

Վերոգրյալի համատեքստում ընդունելի չի կարող համարվել նաև Դիմողի փաստարկը՝ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի նկատմամբ գրաքննություն իրականացնելու վերաբերյալ:

Բացի այդ «Հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ-ից ստացված տեղեկության համաձայն Հանրային հեռուստաընկերության եթերում, որպես նախընտրական տեսահոլովակ հեռարձակվել են առնվազն հետևյալ տեսահոլովակները՝

- https://www.youtube.com/watch?v=0deMMP01TvY&ab_channel=ArmenianPublicTV
- https://www.youtube.com/watch?v=wLB3Biuoxxg&ab_channel=ArmenianPublicTV
- https://www.youtube.com/watch?v=PgYFwHKblzE&ab_channel=ArmenianPublicTV
- https://www.youtube.com/watch?v=CGdme1Iz19g&ab_channel=ArmenianPublicTV
- https://www.youtube.com/watch?v=aJZx7_C5pIQ&ab_channel=ArmenianPublicTV
- https://www.youtube.com/watch?v=X1PQZ2yKZBQ&ab_channel=ArmenianPublicTV
- https://www.youtube.com/watch?v=pW8U9j9CHfY&ab_channel=ArmenianPublicTV
- https://www.youtube.com/watch?v=UOIOzI0W6uE&ab_channel=ArmenianPublicTV

Նման բովանդակությամբ տեսահոլովակների հեռարձակումն ինքնին բավարար է փաստելու համար, որ Հանրային հեռուստաընկերության կողմից որևէ գրաքննություն չի կիրառվել ընտրությանը մասնակցող որևէ ուժի նկատմամբ:

15) Դիմողի կողմից հստակ չի ներկայացվել, թե ինչպիսի տարբերությունների մասին է խոսքը: Ներկայացված հանգամանքներից ողջամտորեն կարելի է ենթադրել, որ Դիմողի կողմից նկատի են առնվում զինծառայողների վերաբերյալ տեղեկությունները, որոնք գաղտնի են և Կենտրոնական ընտրական հանձնաժողով են փոխանցվում Պաշտպանության նախարարության կողմից ՀՀ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:

16) Դիմողի կողմից վկայակոչվում են նաև «Հայաստան» դաշինքի այնպիսի քվեաթերթիկները, որոնք ենթադրաբար պարունակել են կոնկրետ տարբերանշան և հանգեցրել անվավեր ճանաչելու անխուսափելի ռիսկ: Մինչդեռ, դեռևս քվեարկության օրը՝ հունիսի 20-ին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղարի կողմից

հայտարարվել էր, որ տպագրական թերությունների արդյունքում քվեաթերթիկը չի կարող անվավեր համարվել:[6]

Ինչ վերաբերում է Դիմողի կողմից բարձրացված հոսանքազրկումների վերաբերյալ դիտարկումներին, ապա անհրաժեշտ է նախևառաջ արձանագրել, որ առանձին վերցված հոսանքազրկման փաստը չի կարող հանգեցնել բացասական հետևանքների, մանավանդ, որ համապատասխան մատակարարը հրապարակային պարզաբանել է հոսանքազրկման օբյեկտիվ պատճառները: Դիմողի կողմից չեն ներկայացվել փաստական տվյալներ այն մասին, որ հոսանքազրկումների հետ մեկտեղ ընտրության գործընթացի մասնակիցների կողմից եղել են արձանագրումներ այնպիսի դեպքերի վերաբերյալ, ինչպիսիք են քվեատուփերը բացելը, փոխելը կամ ցանկացած այլ եղանակով որևէ կերպ քվեարկության արդյունքներին միջամտելը, այն պարզ պատճառով, որ օբյեկտիվ իրականության մեջ այդպիսի տվյալները բացակայում են: :

17) Դիմողի կողմից, չնայած ընդհանրական բնույթի վկայակոչմանը, այդուհանդերձ չի ներկայացվել կոնկրետ տեսանյութ, որի ուսումնասիրության արդյունքում հնարավոր կլինի դիրքորոշում ձևավորել և անհրաժեշտության դեպքում ներկայացնել հակափաստարկներ: Դիմումում հիշատակվում է մեծաքանակ տեսանյութերի մասին, սակայն դրանցից գոնե մեկի հղումը չի ներկայացվում:

18) Ներկայացված պնդումը հասկանալի չէ առնվազն այն համատեքստում, որ «առանց դրոշմանիշի» և «չդրոշմավորված» քվեաթերթիկները նույնն են և պարզ չէ, թե ինչ անհստակություն կա կոնկրետ դեպքում:

19) Հաշվի առնելով առանձին ընտրատեղամասերում վերահաշվարկների արդյունքում հայտնաբերված հաշվարկի կամ արձանագրությունների լրացման վերաբերյալ անճշտությունները, Դիմողն արտահայտում է վերացական հավանականություն, որ նմանատիպ դեպքեր կարող էին առկա լինել ցանկացած այլ 50 կամ ավելի ընտրատեղամասերում: Նման վերացական դատողությունը ոչ մի դեպքում չի կարող ընդունելի լինել, քանի որ Դիմողը ունեցել է օրենսդրությամբ երաշխավորված բավարար իրավունքներ և գործիքակազմ մյուս ընտրատեղամասերում նույնպես վերահաշվարկի դիմումներ ներկայացնելու և նման հանգամանքը ստուգելու համար, ինչը, սակայն, չի արվել:

20) Դիմողի հերթական պնդումը նախընտրական քարոզչության կազմակերպման վերաբերյալ նույնպես անհիմն է, քանի որ առկա չէ որևէ արգելք, որպեսզի հավաքը կազմակերպող քաղաքական ուժը չկարողանա իրականացնել իր համակիրների տեղափոխությունը հավաքի վայր:

21) ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի նախնական հայտարարությանը (https://www.osce.org/files/f/documents/0/c/490436.pdf) հղում անելով հատվածաբար թվարկվել են դրանում արձանագրված խախտումներ, որոնք փորձ է արվել ներկայացնել որպես համատարած: Այդուհանդերձ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ նախնական հայտարարության համաձայն ընտրությունների դիտարկման հետևությունը հետևյալն

[6] «Տպագրական թերությունների պատճառով քվեաթերթիկը չի կարող անվավեր ճանաչվել. ԿԸՀ քարտուղար», հրապարակված՝ 20 հունիսի 2021թ., «Հայկական ժամանակ» օրաթերթ, հասանելի՝ այստեղ:

է՝ «2021 թվականի հունիսի 20-ին Հայաստանի Հանրապետությունում կայացած արտահերթ խորհրդարանական ընտրությունները եղել են մրցունակ և, ընդհանուր առմամբ, կառավարվել են պատշաճ կերպով կարճ ժամանակահատվածում: Այնուհանդերձ, դրանք բնութագրվել են ինտենսիվ սուր բևեռացվածությամբ և առանցքային մասնակիցների աճող սադրիչ հռետորաբանությամբ: Իրավական դաշտն, ընդհանուր առմամբ, համապարփակ է, սակայն այն փաստը, որ փոփոխություններն ընդունվել են ընտրությունների անցկացման ժամկետին այդքան մոտ ժամանակահատվածում, որոշակի իրավական անորոշություն է առաջացրել: Ընտրությունները կազմակերպող և անցկացնող մարմինն իր աշխատանքը կատարել է թափանցիկ, կոլեգիալ և մասնագիտորեն և վայելել է ընտրական շահառուների վստահությունը: Ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, և հիմնարար իրավունքներն ու ազատությունները, ընդհանուր առմամբ, հարգվել են: Մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել: Այնուհանդերձ, քարոզչության բացասական տոնայնությունը և անձնավորվածությունը խոչընդոտել են քաղաքականության շուրջ կենտրոնացված քննարկումների անցկացմանը: Ընդհանուր առմամբ, քարոզարշավի ողջ ընթացքում կանայք եղել են հետին պլանում: **Ընտրությունների օրը, ներառյալ ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ դրական են գնահատվել: Քվեարկության օրը՝ ներառյալ ձայների հաշվարկը, ընդհանուր առմամբ գնահատվել է դրական**:

Ինչ վերաբերում է ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացրած տեղական դիտորդական Ականատես խմբի հետևություններին, ապա պետք է նշել, որ Դիմողը կամայական ու խիստ հատվածական ցանկ է թվարկել, այնինչ, ըստ այդ կազմակերպության ամփոփիչ զեկույցում (https://transparency.am/hy/news/view/3304) բերված են կոնկրետ թվական տվյալներ ըստ դիտարկված տեղամասերի և զեկույցի հետևությունն է, որ ««Ականատեսի» դիտարկման համաձայն քվեարկության օրն, ընդհանուր առմամբ, անցել է քաղաքացիների շահագրգիռ և ակտիվ մասնակցության պայմաններում: Գործընթացները հիմնականում իրականացվել են կազմակերպված, սահուն, առանց կոպիտ խախտումների: Այդուհանդերձ, նկատվել է որոշակի լարվածություն զգալի թվով տեղամասերում՝ հիմնականում կապված կողմնակի անձանց ներկայության, ուղղորդումների, տեղամասերում առանձին կուսակցությունների վստահված անձանց թույլատրելի քանակի գերազանցման և վերահսկելի քվեարկության դեպքերի հետ: Թեև ընտրախախտումներում նկատվել է տարբեր կուսակցությունների և դաշինքների («Պատիվ ունեմ», «Բարգավաճ Հայաստան», «Քաղաքացիական պայմանագիր», «Զարթոնք», Հայ ազգային կոնգրես, «Շիրինյան-Բաբաջանյան ժողովրդավարների դաշինք») ներկայացուցիչների մասնակցություն, **դեպքերի ճնշող մեծամասնության պատասխանատուն եղել են «Հայաստան» դաշինքի ներկայացուցիչները**»: Այս զեկույցը հրապարակվել է 21.06.2021թ.-ին, թեպետ դիմումատուն ներկայացրել է դիտորդական առաքելության զեկույցից «ցանկալի» քաղվածքը:

Եզրափակիչ մաս.

Ամփոփելով Դիմումի վերաբերյալ սույն դիրքորոշման շրջանակներում ներկայացված հակափաստարկները՝ հարկ ենք համարում արձանագրել, որ Դիմումը զուրկ է հիմնավորումներից, դրանում բացակայում են արժանահավատ ապացույցներով հաստատված փաստերը, ուստի՝ այն ենթակա է մերժման ամբողջությամբ:

Վկայակոչված ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումների լույսի ներքո դիտարկելով Դիմողի պնդումները՝ հարկ ենք համարում հանձնաժողովի ուշադրությանը ներկայացնել այն հանգամանքը, որ Դիմումով ներկայացված որևէ հիմք չի պարունակում ընտրական գործընթացները կանոնակարգող իրավական նորմերի խախտում և դրանք բոլորն իրենց համակցության մեջ չեն կարող հանգեցնել ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցության վերաբերյալ եզրահանգման:»:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները: Եթե այդ միջոցով հնարավոր չէ շտկել այդ խախտումները, ապա Ազգային ժողովի ընտրություններն անվավեր են ճանաչվում, և նշանակվում է Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկություն:»:

Նշված իրավանորմի պահանջներին համապատասխան Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելը կարելի է միայն այն պարտադիր պայմանով, որ թույլ տրված խախտումները բացառեն ընտրության իրական արդյունքները ճշգրտորեն որոշելու հնարավորությունը: Այսինքն, բավարար չէ խախտումների պարզ թվարկումը, այլ պահանջվում է ապացուցել, որ հատկապես այդ խախտումների արդյունքում հնարավոր չէ պարզել ընտրության իրական պատկերը: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու համար պետք է պարզել, թե ընտրության կազմակերպման ու անցկացման, ինչպես նաև քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում տեղի են ունեցել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների խախտումներ, երկրորդ՝ այդ արձանագրված խախտումները պետք է կասկածի տակ դնեն քվեարկության արձանագրված արդյունքները, երրորդ՝ խախտումների բնույթը պետք է լինի այնպիսին, որ ընտրության արդյունքների ամփոփման կամ բողոքի քննարկման ժամանակ արդեն հնարավոր չէ ստույգ որոշել քվեարկության մասնակիցների կամաարտահայտության իրական արդյունքը: Այսինքն, ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ է, որ խախտումների հետևանքները կրեն անդառնալի բնույթ, պետք է կորսված լինի քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունը ստույգ պարզելու հնարավորությունը: Վերոգրյալի

համատեքստում հանձնաժողովը գտնում է, որ եզրահանգումներ կատարելու համար անհրաժեշտ է պարզել այն հանգամանքը, թե վկայակոչված խախտումները նախ՝ առկա են, թե՝ ոչ, հիմնավորվում են դրանք, թե՝ ոչ և առկայության դեպքում արդյոք դրանք ազդել են ընտրության արդյունքի վրա:

Ժողովրդավարական ընտրությունների անցկացումը ենթադրում է մասնակիցների իրավունքը՝ առաջադրելու արդյունքներն անվավեր ճանաչելու հարց: Դրա հետ միասին նման հարցադրման և ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար անհրաժեշտ են ծանրակշիռ հիմքեր: Պետք է հաստատվեն օրենսդրության այնպիսի խախտումներ, որոնք թույլ չեն տալիս վստահորեն վերականգնելու ընտրության իրական արդյունքները:

Այսպիսով, ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելն իրենից ներկայացնում է բավականին լուրջ քաղաքական և իրավական «զենք», որը պետք է օգտագործվի միայն բացառիկ դեպքերում: Եթե ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելը բացառությունից դառնում է կանոն, կամ երբ ընտրության արդյունքները վիճարկելը դառնում է ընտրական պրոցեսի հերթական պարտադիր փուլ, ապա նման համակարգի արդյունավետությունը, ինչպես նաև բարձր իրավական կուլտուրայի առկայությունը իրավմամբ կասկածի տակ կարող է դրվել:

ՀՀ Սահմանադրության համաձայն (հոդված 2)՝ Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով:

Սահմանադրական այս նորմից բխում է, որ ժողովրդի անմիջական իշխանության դրսևորում կարելի է համարել միայն այն ընտրությունները, որոնք անցկացվել են ընտրողների ազատ կամաարտահայտությունը ապահովող պայմաններում, ընդհանուր, հավասար ընտրական իրավունքի սկզբունքների հիման վրա: Եթե ընտրությունն անց է կացվել այդ պայմաններում, ապա պետությունը պետք է ապահովի ընտրության արդյունքների ճանաչումը:

Ընտրության արդյունքների բողոքարկումը չպետք է դիտարկել որպես գործընթացի հերթական փուլ: Ընտրության արդյունքները կարող են անվավեր ճանաչվել միայն այն դեպքում, երբ առկա են հիմնավոր ապացույցներ, որ քվեարկության և ընտրության արդյունքներն ամփոփելու ընթացքում տեղի ունեցած խախտումները թույլ չեն տալիս ճշգրտորեն սահմանելու ընտրությունների քվեարկությանը մասնակցած քաղաքացիների կամաարտահայտության արդյունքները:

Ինքնին ընտրական հանձնաժողովների կողմից առանձին պրոցեսների խախտումը, չի կարող դիտարկվել որպես բավարար հիմք արդյունքների փոփոխման համար:

Ընտրությունների ժամանակ որոշ ձևական պահանջների պահպանման առումով կարող է իմաստազրկվել ընտրության սահմանադրական, ժողովրդավարական էությունը, որպես ազատ կամաարտահայտության ինստիտուտ: Հենց սրանում է նաև ընտրությունների տարբերությունը կառավարչական բյուրոկրատական պրոցեսներից:

Ընտրության էությունը կայանում է քաղաքացիների կողմից իրենց պատկանող քաղաքական իրավունքների իրականացման մեջ: Իսկ այդ պրոցեսի արդյունքները չեն կարող որոշվել բացառապես բյուրոկրատական հիմքերով:

Միայն ընտրության արդյունքների վրա ազդող խախտումների առկայության պարագայում կարող են արդյունքներն անվավեր ճանաչվել:

Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելիս պետք է դրվի քաղաքացիների ընտրություններին մասնակցելու իրավունքի առաջնայնությունը: Հատկապես ընտրության արդյունքներում է նյութականացվում քվեարկության մասնակիցների կամաարտահայտությունը: Այդ իսկ պատճառով ընտրության արդյունքների պաշտպանման բավարար երաշխիքների ստեղծման հարցում կարևորվում է արձանագրված արդյունքների վավերականության կանխավարկածը: Եթե գործնականում այդ սկզբունքը չի պահպանվում ընտրական հանձնաժողովների կողմից, ապա անխուսափելիորեն ձևավորվում են մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս նենգափոխել ընտրության արդյունքներն ի հեճուկս ընտրության մասնակիցների կամաարտահայտության:

Զուտ ընթացակարգային խախտումները ոչ մի պարագայում չպետք է հանգեցնեն քվեարկության արդյունքների անվավերականությանը: Բոլոր այն դեպքերում, երբ հաշվի առնելով այդ խախտումները, այնուամենայնիվ, հնարավոր է ամփոփել քվեարկության արդյունքները, ապա քվեարկությունը պետք է համարել կայացած: Օրենքը չի սահմանում խախտումների տեսակներ կամ քանակ, ինչպես նաև սուբյեկտային կազմ, որոնց կողմից կատարված խախտումները ավտոմատ կերպով կհանգեցնեն ընտրության անվավերության:

Այդ առումով ուշագրավ է և թերևս կիրառելի սույն իրավահարաբերությունների նկատմամբ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմքերի վերաբերյալ նաև Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի անդրադարձը: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2003 թվականի փետրվարի 19-ին կայացած ընտրության արդյունքները վիճարկելու վերաբերյալ գործով կայացված Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշման մեջ, մասնավորապես, նշվում է.

- ընտրություններն անվավեր ճանաչելու կամ չճանաչելու որոշումը յուրաքանչյուր դեպքում կախված է կոնկրետ հանգամանքներից և պետք է հաշվի առնել իրավաբանորեն փաստարկված խախտման լրջությունն ու ծանրությունը, խախտումների ընդգրկման ծավալը, խախտումներ կատարելու միջոցներն ու ձևերը,

- ընտրությունների արդյունքները վիճարկելու մասին գործեր քննելիս՝ սահմանադրական դատարանը պետք է ելնի ոչ միայն Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների ու ազատությունների պաշտպանության, այլև ընտրական գործընթացի, ողջ ընտրական համակարգի հուսալիության ու վստահելիության հանգամանքից՝ օրենսդրությանը համապատասխան այն կազմակերպելու և անցկացնելու առումով,

- ընտրական իրավունքների ապացուցված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքները վերանայելու համար, սակայն այդ վերանայման էական բովանդակությունը պետք է կազմի այն հարցի պատասխանը, թե արդյո՞ք առկա իրավախախտումներն այնպիսի ընդգրկում ունեն, որ կարող են կասկածի տակ դնել ամբողջ ընտրությունների արդյունքները և վավերությունը,

- որևէ ընտրատեղամասում կամ տարածքում կատարված խախտումները չեն կարող հիմք հանդիսանալ այլ տեղամասերում նմանատիպ խախտումների մասին ենթադրություններ անելու կամ վստահության աստիճանը կասկածի տակ դնելու համար:

Ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմք կարող են հանդիսանալ միայն իրավաբանորեն փաստարկված այն կոնկրետ խախտումները, որոնք էական ազդեցություն են ունեցել կամ կարող էին ունենալ ընտրությունների վերջնական արդյունքների վրա,

-ընտրությունների արդյունքները կարող են անվավեր ճանաչվել, եթե խախտումներն էապես ազդել են թեկնածուների ստացած ձայների հարաբերակցության վրա և ընդհանուր արդյունքն աղավաղված է:

Վերոգրյալի հիման վրա Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ.

- ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու համար հիմք հանդիսացող խախտումների որոշակի ցանկ գոյություն չունի.

- ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելը չի կարող մեխանիկական բնույթ ունենալ.

- ընտրական պրոցեսում թույլ տրված ցանկացած խախտում ինքնին հիմք չէ ընտրության արդյունքները անվավեր ճանաչելու համար, քանի դեռ պարզված չէ ընտրությունների արդյունքների վրա այդ խախտումների ազդեցության իրական կամ հնարավոր չափը:

Ներկայացված դիմումի վերլուծությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է.

ՀՀ ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումը պետք է ստորագրված լինի դիմողի կողմից, ներառի նրա անունը, ազգանունը, դիմողի հասցեն, տրման ամսաթիվը: Դիմումը կարող է ներառել նաև դիմումատուի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն: Դիմումում պետք է սահմանված լինի դիմումատուի պահանջը, բերված լինեն դիմումատուի հիմնավորումները: Հնարավոր ապացույցները պետք է կցված լինեն դիմումին»:

Նշված իրավանորմը սահմանում է հստակ պարտավորություն դիմումատուի համար դիմումի հիմնավորումներ ներկայացնելու և հնարավոր բոլոր ապացույցները դիմումին կից ներկայացնելու համար: Նշված կանոնակարգման հիմքը, թերևս ընտրական իրավահարաբերությունների համար Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկություններն են, քանզի դիմումների քննության համար սահմանված են

սովորականի համեմատ ավելի կարճ ժամկետներ և որպեսզի լիարժեք կազմակերպվի դիմումի քննությունը օրենսդրի կողմից սահմանված է դիմումով հիմնավորումները ներկայացնելու և ապացույցները կցելու պարտականություն:

Ներկայացված դիմումներով, որպես ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու հիմք, վկայակոչվում են դիմողների գնահատմամբ նաև այնպիսի խախտումներ, որոնք տեղի են ունեցել մինչև ընտրություններ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

«1. Ազգային ժողովի արտահերթ ընտրություններն անցկացվում են Ազգային ժողովն արձակվելուց ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 45 օր հետո:

2. Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ նշանակելու մասին Հանրապետության նախագահը հրամանագիր է հրապարակում Ազգային ժողովն արձակելու մասին հրամանագրի հետ միաժամանակ»:

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի արտահերթ ընտրությունները նշանակվել են Հայաստանի Հանրապետության նախագահի 10.05.2021թ. «Ազգային ժողովի արտահերթ ընտրություն նշանակելու մասին» թիվ ՆՀ-99-Ն հրամանագրով: Հանրապետության նախագահի 10.05.2021թ. թիվ ՆՀ-99-Ն հրամանագիրը ուժի մեջ է մտել 11.05.2021թ. և նույն օրն էլ կենտրոնական ընտրական հանձնաժողովը ընդունել է թիվ 27-Ա որոշումը, որով հաստատել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայանալիք արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը: Վերոգրյալ իրավակարգավորումներից ակնհայտ է, որ դիմողների կարծիքով այն խախտումները, որոնք տեղի են ունեցել մինչև ընտրական գործընթացի մեկնարկը չեն կարող գնահատման առարկա հանդիսանալ ընտրության արդյունքների վավերականության վիճարկման տեսանկյունից:

Դիմումատուների հաջորդ պնդումները վերաբերում են նախընտրական քարոզչության ժամանակ հոգեբանական հարկադրանքի մեթոդներին և բռնության կոչերին, բռնության կիրառման սպառնալիքներին և ատելության խոսքին: Նշվածի հիմնավորման նպատակով վկայակոչվում է նաև կենտրոնական ընտրական հանձնաժողովի անգործությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է, որ 09.06.2021 թվականին «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության կողմից ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել թիվ 09/21 դիմումը: Դիմումով ներկայացվել էին ՀՀ Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված պատգամավորի թեկնածու Նիկոլ Փաշինյանի նախընտրական քարոզչության ժամանակ տարբեր հանդիպումների ժամանակ հնչեցրած կոչերի և ելույթների վերաբերյալ փաստական հանգամանքներ՝ գնահատելով, որ դրանք բռնության և ատելության կոչեր են և ներկայացվել էր պահանջ դիմել դատարան՝ ընտրություններին մասնակցող «Քաղաքացիական

պայմանագիր» կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը 13.06.2021 թվականի թիվ 149-Ա որոշմամբ մերժել է «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության 09.06.2021 թվականի թիվ 09/21 դիմումը: Մերժման հիմքում դրվել է հետևյալ պատճառաբանությունը՝ «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ սույն դիմումի փաստերի համատեքստում կուսակցությունների ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական քարոզչության բովանդակության գնահատումը, այն էլ առանց օրենքով հստակ սահմանված սահմանների առկայության կամ ամրագրված չափորոշիչների, և այդ գնահատման հիմքով էլ կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի, ինչպես նաև նրանց ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների գրանցումն ուժը կորցրած ճանաչելու հարցի առաջադրումը, հնարավորություն կտա ամենատարբեր սուբյեկտիվ որակումներ տալու համար՝ հանգեցնելով ցանկացած հայտարարության և քարոզչական նյութի ընդհուպ գրաքննության»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 13.06.2021թ. թիվ 149-Ա որոշումը բողոքարկվել է դատական կարգով և ՀՀ Վարչական դատարանը 17.06.2021թ. Ն ՎԴ/6861/05/21 գործով կայացված դատական ակտով ներկայացված փաստական հանգամանքների կապակցությամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ.

«… ընտրություններին մասնակցող կուսակցության կամ թեկնածուի կողմից նախընտրական քարոզչության ընթացքում ցանկացած կոնտեքստով, անձնավորված կամ անորոշ թվով անձանց ուղղված, որոշակի կամ անորոշ ձևակերպմամբ վերը շարադրված մտքերը պարունակող արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող են ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիք, հետևաբար սույն վարչական գործով հայցվորի փաստարկներն առ այն, որ երրորդ անձ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից վերը նշված տեսաձայնագրություններում հնչեցված արտահայտություններն օբյեկտիվորեն և ողջամտորեն կարող էին ընկալվել որպես բռնության կիրառման սպառնալիքներ, հիմնավոր են, ուստի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված գործիքակազմի կիրառման տեսանկյունից առաջադրված նախապայմանը՝ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումը, սույն դեպքում առկա է:

Դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված անհրաժեշտ պայմաններից խախտման շարունակական բնույթին և արձանագրում է, որ նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտման շարունակական բնույթ ունենալը յուրաքանչյուր դեպքում պետք է պայմանավորել նախընտրական

քարոզչության իրականացման ամբողջ ժամանակահատվածում այդ խախտումը կատարելու տևական ժամանակահատվածի հաշվառմամբ, այլ կերպ՝ պետք է խախտման շարունակական բնույթը պայմանավորել այն հանգամանքով, թե նախընտրական քարոզչության իրականացման ամբողջ ժամանակահատվածում այդ խախտումը որքան ժամանակահատված է տևել:

Դատարանն արձանագրում է, որ ներկայացված տեսանյութերի հետազոտմամբ պարզ է դառնում, որ երրորդ անձ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության թեկնածու Նիկոլ Փաշինյանի կողմից որպես բռնության կիրառման սպառնալիք որակվող արտահայտությունները հնչեցվել են նախընտրական քարոզչության ժամանակահատվածում տարբեր օրերի՝ շարունակաբար՝ 08.06.2021թ.-ին, 13.06.2021թ.-ին, 14.06.2021թ.-ին, 15.06.2021թ.-ին, հետևաբար Դատարանն արձանագրում է, որ նախընտրական քարոզչության համար սահմանված ժամանակահատվածում այդ պարբերականությամբ արտահայտությունների հնչեցումը որակվում է որպես շարունակական բնույթ կրող, ուստի նշված չափանիշի առկայությունը ևս հաստատվում է:»:

ՀՀ Վարչական դատարանը նույն դատական ակտով հանգել է եզրահանգման որ. «... բացակայում են ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ կետով սահմանված՝ ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու համար ընտրական հանձնաժողովի կողմից դատարան դիմելու՝ խախտման հետևանքները վերացնելը հնարավոր չլինելու և խախտումն ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցություն ունենալու հիմքերը»: Նման եզրահանգման համար դատարանը որպես հիմք է ընդունել այն մոտեցումը, որ «ազդեցությունը կարող է որակվել էական միայն այն դեպքում, երբ նախընտրական քարոզչության սահմանված կարգի շարունակական խախտման արդյունքում առկա է ռեալ վտանգ կամ այդպիսի հիմնավոր կասկած, որ տեղի է ունեցել ներգործություն ընտրողների այնպիսի զանգվածի ազատ արտահայտման հնարավորության վրա, որը ձայների հարաբերակցության պայմաններում կարող է փոխել ընտրությունների արդյունքը: Ըստ այդմ, խախտման շարունակական բնույթը տվյալ դեպքում խիստ փոխկապակցված է էական ազդեցության հետ, քանի որ միայն դրանց միջև պատճառահետևանքային կապի հաստատման կամ այդպիսի հիմնավոր կասկածի դեպքում հնարավոր է արձանագրել, որ տեղի է ունեցել այնպիսի շարունակական խախտում, որը կարող է էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա կամ առկա է այդպիսի հիմնավոր կասկած: Այսինքն՝ սույն դեպքի փաստակազմի և տրված իրավական մեկնաբանության համադրմամբ Դատարանն արձանագրում է, որ առկա չէ ողջամիտ կասկած այն մասին, որ շարունակական բնույթ կրող վերը նշված խախտումները կարող են էական ազդեցություն ունենալ ընտրությունների արդյունքների վրա»:

Չնայած Վարչական դատարանի վճռով արտահայտված իրավական դիրքորոշման և եզրահանգման «Զարթոնք» ազգային քրիստոնեական կուսակցության հայցն ընդդեմ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի, երրորդ անձ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցություն՝ պատասխանողին դատարան դիմելուն պարտավորեցնելու պահանջի մասին, մերժվել է և, ըստ էության փաստել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 13.06.2021թ. թիվ 149-Ա որոշման իրավաչափությունը:

ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 8-րդ մասում, ինչպես նաև նույն օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է «ընտրությունների արդյունքների վրա էական ազդեցության» հանգամանքը: Այսինքն, մի ինստիտուտ, որն այնպիսի որակական բովանդակություն է հաղորդում խախտմանը, որից ծագում են ուղղակի հետևանքներ: Տվյալ պարագայում դատական ակտը ուժի մեջ թողնելով կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը, հենց նշված դատական ակտով էլ բացառել է առկա խախտումների էական ազդեցության հանգամանքը:

Դիմումատուն թվարկում է քվեարկության օրը ընտրական տեղամասերում առկա կուտակումներ, որոնք անգամ լինելիության պայմաններում չէին կարող և չեն գործել որևէ ազդեցություն ընտրության արդյունքների վրա:

Դիմումատուի կողմից փաստվում է նաև բազմաթիվ կտրոնների վրա անձանց լուսանկարների առկայությունը և այն որակում խախտում: Նախ հարկ է նկատել, որ ՀՀ ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համաձայն.

«3. Եթե ընտրողը գրանցված է տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացրել է նույնականացման քարտը, կենսաչափական անձնագիրը կամ 2008 թվականի հունվարի 1-ից հետո տրված ոչ կենսաչափական անձնագիրը և առ այդ պահն անձը հաստատող որևէ փաստաթղթով չի մասնակցել քվեարկությանը, ապա էկրանին հայտնվում են տվյալ ընտրողի լուսանկարը, ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը և կանաչ նշան:

4. Եթե ընտրողը գրանցված է տվյալ տեղամասի ընտրողների ցուցակում և որպես անձը հաստատող փաստաթուղթ ներկայացրել է մինչև 2008 թվականի հունվարի 1-ը տրված ոչ կենսաչափական անձնագիրը և առ այդ պահն անձը հաստատող որևէ փաստաթղթով չի մասնակցել քվեարկությանը, ապա էկրանին հայտնվում են ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը և կանաչ նշան՝ առանց ընտրողի լուսանկարի»:

Նշված իրավադրույթը արդեն իսկ հնարավոր է համարում առանց ընտրողի լուսանկարի քվեարկության կտրոնների առկայությունը և նման կտրոնների տրամադրմամբ ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների խախտում առկա չէ: Ավելին, նկատենք, որ տեխնիկական սարքավորումներ ներբեռնված էլեկտրոնային ցուցակներում 163.154 քաղաքացիների տվյալներում բացակայել է լուսանկարը, այդ քաղաքացիներից քվերակությանը մասնակցել է 23.790 քաղաքացի: Հարկ է նկատել նաև, որ քվեարկությանը մասնակցող զինծառայողներին, ինչպես նաև քվեարկության օրը տեղամասում կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկված ընտրողներին տրվող կտրոնների վրա լուսանկարը ևս բացակայում է: Դիմումատուի կողմից չի բերվում որևէ փաստարկ առ այն, որ որևէ քաղաքացու պարագայում

լուսանկարի առկա չլինելը տեղի է ունեցել ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջների խախտմամբ, ավելին՝ դա էլ նպաստել է որևէ իրավախախտման:

Ուղղորդված քվեարկության դեպքերի հետ կապված տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից այդպիսին գնահատված նյութերը փոխանցվել են իրավապահ մարմիններին, սակայն տեսախցիկների օգնությամբ հետևելով քվեարկության ընթացքին, էլեկտրոնային կայքերում առկա հրապարակումներին, ինչպես նաև ուսումնասիրելով տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյանները կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ ուղղորդված քվեարկության դեպքերը չեն կրել կազմակերպված կամ համընդհանուր բնույթ, ուստիև չէին կարող ունենալ որևէ ազդեցության ընտրության արդյունքների վրա:

Նախընտրական քարոզչության ընթացքում տեղի ունեցած ձերբակալությունների և բերման ենթարկելու դեպքերի ընտրության արդյունքների վրա ազդեցության գնահատման համար հարկ է նկատել, որ միայն ձերբակալության և բերման ենթարկելու հանգամանքը առանձին վերցրած՝ ինքնին չի կարող գնահատվել ընտրության արդյունքների վրա ազդեցության տեսանկյունից:

Ընտրական տեղամասերում հոսանքազրկումների հետ կապված, հարկ է նկատել, հոսանքազրկման դեպքեր առկա են եղել և քվեարկության ընթացքում և դրա ավարտից հետո: Այդ կապակցությամբ ներկայացվել են պարզաբանումներ, որ հոսանքազրկումը տեղի է ունեցել վթարների արդյունքում, ձեռնարկվել են միջոցներ հնարավորինս կարճ ժամկետներում հետևանքները վերացնելու ուղղությամբ և հնարավոր ամենակարճ ժամկետներում վթարի հետևանքները վերացվել են և մատակարարումները վերականգնվել են: Հարկ է նկատել, որ քվեարկության ընթացքում տեղի ունեցած հոսանքազրկումները, որևէ խնդիր չեն առաջացրել, քանի որ տեխնիկական սարքավորումները աշխատում են նաև համապատասխան մարտկոցներով և աշխատանքի խափանում չի արձանագրվել, իսկ քվեարկության արդյունքների ամփոփման հետ կապված իրավախախտման փաստեր չեն արձանագրվել: Ավելին, նշվածով պայմանավորված անգամ վերահաշվարկ կատարելու դիմումներ չեն ներկայացվել:

Քվեաթերթիկների ծրարների թափանցման հետ կապված դեպքեր քվեարկության ընթացքում չեն արձանագրվել և որևէ տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Դիմումատուների կողմից նշվում է, որ ընտրական գործընթացի ընթացքում մինչև 2021 թվականի հունիսի 10-ը հազարավոր անձինք, որոնք ստիպված տեղափոխվել էին ՀՀ մշտական բնակության և/կամ ունեին ՀՀ անձնագիր հնարավորություն չեն ունեցել մասնակցելու քվեարկությանը, քանի որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից առանց որևէ իրավաչափ հիմնավորման կամ պատճառաբանման որդեգրվել էր տարբերակված մոտեցում: Ըստ պատշաճ ձևով չհերքված պնդումների՝ նման հարցերով դիմումների բավարարումը կամ մերժումը որոշ դեպքերում պայմանավորված է եղել քաղաքական հայացքներով և ոչ թե որևէ իրավական հանգամանքով: Հարկ է նկատել, որ ընտրողների ցուցակում ընդգրկվելու

դիմումները սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվում են լիազոր մարմնին, իսկ մերժումը կամ մերժում չտրվելը դիմումատուները կարող էին բողոքարկել վարչական կամ դատական կարգով:

Ինչ վերաբերում է նախընտրական քարոզչության ընթացքում՝ եթերաժամի տրամադրումը անհիմն պատճառներով մերժելու հանգամանքին, ապա հարկ է նկատել, որ նշված հանգամանքների վեաբերյալ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արտահայտել է իր դիրքորոշումը՝

«Ընտրական օրենսգիրքը թույլատրելի է համարում թեկնածուին, ընտրություն-ներին մասնակցող կուսակցությանը կողմ կամ դեմ քվեարկելուն ուղղված քարոզչությունը, այդ թվում՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածում:

Նախընտրական քարոզչության միջոցների և քարոզչական նյութերի, հայտարարությունների, կոչերի բովանդակությունը որոշում է քարոզչություն իրականացնողը»:

Եվրոպական հանձնաժողով հանուն ժողովրդավարության օրենքի միջոցով (Վենետիկյան հանձնաժողով) Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. Ցուցումներ և Բացատրական զեկույց ՝ ընդունված Վենետիկյան հանձնաժողովի կողմից 52-րդ լիագումար նստաշրջանի ընթացքում (Վենետիկ, 2002թ. հոկտեմբերի 18-19) փաստաթղթի 60-րդ կետը սահմանում է.

«Ժողովրդավարական ընտրությունների անցկացումը, նույնիսկ անգամ ժողովրդավարության գոյությունը, հնարավոր չէ առանց մարդու իրավունքների և մասնավորապես ազատ արտահայտվելու, ազատ մամուլի և քաղաքական նպատակ-ներով, այդ թվում՝ նաև քաղաքական կուսակցությունների ստեղծման նպատակով, ազատ հավաքվելու և միավորվելու իրավունքների նկատմամբ հարգանքի: Այս ազատությունների նկատմամբ հարգանքը էական է հատկապես նախընտրական արշավների ժամանակ: Այս հիմնարար իրավունքների նկատմամբ սահմանափակում-ները պետք է համապատասխանեն Մարդու իրավունքների եվրոպական համա-ձայնագրին, ընդհանուր առմամբ այն դեպքում, երբ դրանք հիմքեր ունեն օրենքով և բխում են ընդհանուր շահերից ու համամասնականության ապահովման սկզբունքից»: Առաջադրված հարցի վերաբերյալ կողմնորոշիչ պետք է հանդիսանան նույն փաստաթղթի 61-րդ կետի մոտեցումները, որով նշվում է. «Փաստն այն է, որ շատ երկրներում կարող են գոյություն ունենալ իրավական սահմանափակումներ խոսքի ազատության նկատմամբ, որոնք զուսպ (սահմանափակ) լինելու պարագայում կարող են պարզապես ընդունելի լինել, բայց կարող են չարաշահումների տեղիք տալ ազատական, ժողովրդավարական ավանդույթներ չունեցող երկրներում: Տեսականո-րեն խոսքի ազատության սահմանափակման նպատակն է կանխել խոսքի ազատու-թյան «չարաշահումը», օրինակ զերծ պահելու թեկնածուներին ու պետական իշխանու-թյուններին պախարակումից, և նույնիսկ պահպանելու սահմանադրական համակար-գը: Գործնականում, սակայն, դրանք կարող են հանգեցնել կառավարությանը քննադատող կամ սահմանադրական կարգի փոփոխությունների կոչ անող ցանկացած հայտարարության հանդեպ ցենզուրայի (գրաքննության) կիրառման, այնինչ խոսքի

նման ազատությունն է ժողովրդավարական բանավեճի էությունը: Օրինակ՝ Եվրոպական չափանիշները ոտնահարվում են այնպիսի ընտրական օրենքով, որն արգելում է վիրավորական և պախարակող արտահայտություններ անել պաշտոնյաների կամ այլ թեկնածուների մասին ընտրարշավի փաստաթղթերում, օրինախախտում է համարում թեկնածուներին պախարակող տեղեկատվության տարածումը և թեկնածուներին պատասխանատվության է ենթարկում նրանց համախոհների կատարած կոնկրետ օրինախախտումների համար: Պարտադրելը, որ ընտրարշավում օգտագործվելիք նյութերը ներկայացվեն ընտրական հանձնաժողովներին՝ մատնանշելով, թե որ կազմակերպությունն է դրանք պատվիրել և պատրաստել, օրինակների թիվը և հրապարակման ամսաթիվը, ցենզուրայի անընդունելի ձև է, հատկապես եթե ընտրական հանձնաժողովներից պահանջվում է միջոցառումներ ձեռնարկել անօրինական կամ ոչ ճշգրիտ հրապարակությունների նկատմամբ: Նման ցենզուրայի պարտադրումը խոսքի ազատության ակնհայտ ոտնահարում է, մասնավորապես այն դեպքում, երբ ընտրարշավների ժամանակ մամուլի ոչ ճիշտ օգտագործումն արգելող կանոնները հստակ չեն սահմանված»:

Վերոգրյալը հիմք ընդունելով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն առաջադրված հարցերի վերաբերյալ ներկայացրել է իր հստակ ձևավորված մոտեցումը՝ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների, նրանց ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների կողմից իրականացվող նախընտրական քարոզչության բովանդակության գնահատումը՝ չունենալով օրենքով հստակ սահմանված չափորոշիչներ և սահմաններ, կարող է հնարավորություն տալ ամենատարբեր սուբյեկտիվ գնահատականների՝ հանգեցնելով նաև ցանկացած հայտարարության, ինչու չէ նաև քարոզչական նյութի գրաքննության, ինչը միանշանակ անթույլատրելի է: ՀՀ ընտրական օրենսգիրքը նշված հարցերով որևէ գրաքննություն կատարելու լիազորություն հեռարձակող ընկերությունների համար չի նախատեսում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդգծում է, որ թեկնածուների կողմից հնչեցվող խոսքում, հրապարակային ելույթներում և այլ քարոզչական նյութերում, հնարավոր քրեական պատասխանատվության հանգեցնող կոչերն ու հայտարարությունները կարող են գնահատման առարկա հանդիսանալ իրավապահ մարմինների կողմից և կարող են հադիսանալ այլ վարույթների առարկա: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից օպերատիվորեն ձեռնարկված միջոցների արդյունքում ապահովվել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքների համար հավասար պայմաններ:

Դիմումներում ներկայացված է. «Ընտրությունների «ազատ» լինելու սկզբունքի երաշխավորման համար պարտադիր վավերապայման է ընտրություններին մասնակցելու իրավունք ունեցողների տվյալների հասանելիությունը: Մինչդեռ ընտրություններին մասնակցել են հազարավոր անձինք, որոնց տվյալները պահվել են գաղտնի, քվեարկության վայրը պահվել է գաղտնի և հասանելի տեղեկատվություն առկա չի եղել: Ավելին՝ ընտրություններին հնարավոր խախտումների և կեղծիքների կանխարգելման համակարգերը (ինչպես օրինակ անձնագրի ընտրատարածքային

տեղամասում հաշվառելը) առհասարակ առկա չի եղել հազարավոր անձանց դեպքում: Նշվածը ինքնին անհնարին է դարձրել այդպիսի կարգավիճակ ունեցող անձանց մասով պատշաճ հսկողական և վերահսկողական մեխանիզմների իրականացումը»:

Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Ընտրական օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ընտրողների ցուցակներ կազմում են նաև զորամասերի հրամանատարները: Զորամասի ընտրողների ցուցակներում, Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ընդգրկվում են պարտադիր ժամկետային զինծառայողները, ինչպես նաև զորամասերի տեղակայման տարածքում հաշվառված պայմանագրային զինծառայողները և նրանց հետ նույն տարածքում հաշվառված ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամները:

Ընտրական օրենսգրքի 10-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դեպքում՝ քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր, 10 օր և 6 օր առաջ պաշտպանության նախարարությունը, ազգային անվտանգության ծառայությունը և ոստիկանությունը լիազոր մարմին ու Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում համապատասխանաբար զորամասերում, ազգային անվտանգության և ոստիկանության զորքերում հաշվառված ընտրողների թիվը, որը հաշվի է առնվում Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածի պահանջների պահպանմամբ՝ սահմանված ժամկետներում ընտրական տեղամասերի կազմավորման համար, իսկ հետագայում ներառվում է ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր թվում:

Հայաստան դաշինքի դիմումի 15-րդ կետում ներկայացված տեղեկությունները ըստ էության վերաբերում են զինծառայողների քվեարկությանը: Նման եզրահանգման համար հիմք են հանդիսանում այն տվյալները, որոնք Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է իր պաշտոնական կայքում՝ ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 4-րդ մասով, որի համաձայն՝ Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով կազմակերպվում է տեխնիկական սարքավորումներից ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը և դուրս բերելը և համակարգիչ ներմուծելը՝ հատուկ համակարգչային ծրագրի միջոցով: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության համաձայն՝ տեխնիկական սարքավորման կողմից զորամասում հաշվառված ընտրողների համար տպված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվ՝ 10993 է:

Զորամասում հաշվառված ընտրողների տվյալների չհրապարակայնեցնելու պահանջը ևս սահմանված է Ընտրական օրենսգրքով, մասնավորապես Ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 12-րդ մասի համաձայն՝ զորամասերում հաշվառված ընտրողների թիվը, ինչպես ընդհանուր, այնպես էլ ըստ ընտրական տեղամասերի, այն ընտրական տեղամասերի համարները և գտնվելու վայրերը, որտեղ քվեարկում են զորամասերում կազմվող ընտրողների ցուցակներում ընդգրկված ընտրողները, զորամասերում կազմվող ընտրողների ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից քաղվածքներ չեն կատարվում:

Ըստ դիմումատուների՝ մի շարք ընտրատեղամասերում ընտրողներին են տրամադրվել նախօրոք պատրաստված քվեաթերթիկների փաթեթներ, որի արդյունքում արձանագրվել են մի շարք դեպքեր, երբ այդ փաթեթները չեն պարունակել բոլոր քվեաթերթիկները և դիտորդների նկատառումներից հետո միայն բացակայող քվեաթերթիկները համալրվել են և անդամները սկսել են քվեաթերթիկները հավաքել ընտրողի աչքի առջև:

Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

«Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ քվեաթերթիկների և քվեարկության ծրարների տրամադրման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ընտրողին տրամադրում է ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական քվեաթերթիկ և քվեարկության մեկ ծրար: Ընտրողը չի կարող հրաժարվել բոլոր քվեաթերթիկներն ստանալուց»:

Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումին պետք է կցված լինեն հնարավոր ապացույցները, իսկ նույն հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, իսկ ընտրական հանձնաժողովը՝ իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել: Սույն մասով սահմանված կանոնները վերաբերում են նաև ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու կամ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումներին:»:

Վերը ներկայացված փաստական հանգամանքները հիմնավորող և ապացուցողական նշանակություն ունեցող որևէ ապացույց չի ներկայացվել:

Ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի կանոնակարգումների համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները, և ուսումնասիրության արդյունքում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ որոշ տեղամասային ընտրական հանձնաժողովներ թույլ են տվել Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգի խախտում, որը վերացվել է, արդյունքում ապահովվել է Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը և ընտրական իրավունքի իրացումը:

«Պատիվ ունեմ» դաշինքի դիմումի 9-12 կետերով նկարագրված հանգամանքները վերաբերում են տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեղի ունեցած ենթադրյալ խախտումներին:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ

անգործության մասին բողոքները, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ նախատեսված դեպքի, ներկայացվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝ 2 օրվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին: Սույն պարբերությամբ նշված բողոքները համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող են ներկայացվել աշխատանքային օրերին՝ ժամը 9.00-ից մինչև 18.00-ն, իսկ քվեարկության նախորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև 19.00-ն:

Քվեարկության օրվա ընթացքում կամ քվեարկության հաջորդ օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները ներկայացվում են համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով՝ քվեարկության օրը ժամը 8.00-ից մինչև ժամը 22.00-ն, կամ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն»:

Հարկ է նկատել, որ ներկայացված հանգամանքները վերաբերել են առանձին դեպքերի և դիմումատուների կողմից կարող էին բողոքարկվել տարածքային ընտրական հանձնաժողովներ:

Ըստ դիմումատուների համացանցում հայտնված տեսանյութերը վկայում են զինված ուժերում ուղղորդված քվեարկության հնարավոր դեպքերի մասին, որոնք պետք է մանրակրկիտ ուսումնասիրության ենթարկվեն: Ավելին, կասկած է առաջացնում սպաների կողմից ինչպես զորամասերում, այնպես էլ իրենց հաշվառման վայրի ընտրական տեղամասերում կրկնակի քվեարկություն կատարելու հանգամանքը: Ընդ որում, նշված դեպքերով արդեն իսկ հարուցվել են քրեական գործեր: Ուսումնասիրելով առկա նյութերը հանձնաժողովը գտնում է, որ այն չի կարող գնահատվել քվեարկության արդյունքների վրա ազդող, իսկ նշված փաստերով հարուցվել են քրեական գործեր:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ուսումնասիրելով նաև 2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատական ակտերը, գտնում է որ դրանցով հաստատված հանգամանքները չեն կարող ազդել ընտրությունների արդյունքների վրա:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի նախագահի 2021 թվականի հունիսի 27-ի թիվ ԴԴ-9-28674/21 գրության համաձայն 2021 թվականի հունիսի 27-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի վարույթում 2021 թվականի հունիսի 20-ին կայացած Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ անավարտ գործ առկա չէ:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատես-

ված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Նույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ազգային ժողովի, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրություն չի կազմում, քվեարկության արդյունքների վերահաշվարկի համար սույն օրենսգրքով սահմանված ժամկետներում ուսումնասիրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումները, ուսումնասիրության արդյունքներն ամփոփում է հանձնաժողովի նիստում և այդ մասին ընդունած որոշումը ներկայացնում Կենտրոնական ընտրական հանձնաժողով»:

Միայն 469 (կամ ընդհանու տեղամասերի 23.3%-ում) տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել թվով 1035 գրառումներ, իսկ 1539 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ:

Թվով 2008 տեղամասերից միայն 1 տեղամասի քվեարկության արդյունքների արձանագրություններում է առկա նշում հատուկ կարծիք ունենալու մասին: Ուշագրավ է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով 16.064 անդամներից միայն 1-ն է ներկայացրել հատուկ կարծիք:

Տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ, որոնցով ամրագրվել է, որ 2021 թվականի հունիսի 20-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 20.06.2021թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

ՀՀ գլխավոր դատախազության տեղեկատվության համաձայն ՀՀ գլխավոր դատախազությունում ստեղծված աշխատանքային խմբի կողմից 2021թ. հունիսի 25-ի դրությամբ հարուցվել է 37 քրեական գործ:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ամփոփվել է նաև Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից 2021թ. հունիսի 20-ի ՀՀ Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների նախընտրական քարոզչության սահմանված կարգի պահպանման վերաբերյալ՝ ըստ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի մշտադիտարկման արդյունքների եզրակացությունը:

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը եզրակացրել է, որ.

«Կարելի է փաստել, որ առկա է առանձին հեռուստառադիոընկերությունների կողմից ընտրություններին մասնակցող կուսակցություններին և կուսակցությունների դաշինքներին հատկացված եթերաժամանակի որոշակի անհամաչափություն:

Հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է եզրակացության, որ այդ անհամաչափությունը պայմանավորված է կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների կողմից իրենց նախընտրական քարոզչության գործընթացների պլանավորման և իրակա նացման միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման տարբերություններով: Այդ տարբերությունները պայմանավորված են նաև կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներում առկա միջոցների, անվճար և վճարովի եթերաժամանակի օգտագործման, հեռուստառադիոծրագրերում հյուրընկալվելու պատրաստակա- մության աստիճանի առանձնահատկություններով: Այսպիսով, ելնելով վերոնշյալից Հանձնաժողովը տեսալսողական մեդիա ծառայություն մատուցող ընկերությունների կողմից տրամադրած և՛ 10 կուսակցությունների և՛ կուսակցությունների դաշինքների կողմից օգտագործված եթերաժամանակի արձանագրված անհամաչափությունները՝ որպես տեսալսողական մեդիա ծառայություն մատուցող ընկերությունների կողմից նախընտրական քարոզարշավին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմաններ ապահովելու խախտում չի գնահատում»:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է նաև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայության 26.06.2021թ. եզրակացությունը «Ազգային Ժողովի 2021 թվականի հունիսի 20-ի արտահերթ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքների մասին»: Համադրելով Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը փաստում է, որ բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կողմից ներկայացված՝ նախընտրական հիմանդրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին: Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում Ազգային ժողովի խմբակցությունների կողմից վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունում նշանակված աուդիտորների կողմից ևս որևէ առարկություն կամ դիմում չի ներկայացվել:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2021 թվականի հունիսի 20-ին կայացած արտահերթ ընտրությունների նախապատրաստման և քվեարկության ընթացքում տեղի չեն ունեցել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակվելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Տ. Մուկուչյան**